ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
Կատարողականի հաշվեքննության
արդյունքների վերաբերյալ

Հաստատվել է Հաշվեքննիչ պալատի
2025 թվականի փետրվարի 27-ի N 12–Ա որոշմամբ

Պարտադիր կրթության համակարգում ընդգրկվածությունը



ԿՀ-0002-25-01 **2025**

Հաշվեքննիչ պալատի առաքելությունն է՝ նպաստել հանրային կառավարումը **բարելավելուն**:

Դրան հասնելու համար Հաշվեքննիչ պալատն իրականացնում է հաշվեքննություններ, որոնց արդյունքում **ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ** տեղեկատվություն է տրամադրում հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետությունում արտաքին պետական հաշվեքննության (հանրային հատվածում արտաքին աուդիտի) ոլորտում քաղաքականությունը մշակող, հաստատող և իրականացնող անկախ պետական մարմինն է: Յուրաքանչյուր տարի Հաշվեքննիչ պալատն ընդունում է իր գործունեության ծրագիրը՝ ելնելով հաշվեքննության առաջնահերթ ուղղություններից: Հաշվեքննությունների իրականացմամբ Հաշվեքննիչ պալատը գնահատում է հանրային միջոցների կառավարման օրինականությունը (ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ) և արդյունավետությունը (կատարողականի հաշվեքննություններ): Իր գործունեության ընթացքում Հաշվեքննիչ պալատը ղեկավարվում է թափանցիկության ու հաշվետվողականության արժեքներով և պարբերաբար հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանն է ներկայացնում հաշվետվություններ հանրային միջոցների կառավարման օրինականության և արդյունավետության վերաբերյալ: Հաշվեքննիչ պալատի առանցքային նպատակադրումն է՝ համակարգային խնդիրների վերհանման և լուծումների առաջարկների միջոցով նպաստել քաղաքացու կյանքում դրական փոփոխություններին:

Միջնաժամկետ հորիզոնում Հաշվեքննիչ պալատը նպատակադրել է՝ **մարդակենտրոն հաշվեքննությունների** միջոցով նպաստել մարդու պահանջմունքներն արդյունավետորեն հասցեագրող հանրային կառավարմանը և միջազգային լավագույն փորձին համահունչ՝ պետության **ինստիտուցիոնալ** կարողությունների զարգացմանը:

Այդ նպատակով իրականացվող կատարողականի հաշվեքննության առաջնահերթություններից է «Մարդուն մատչելի և որակյալ **ցկյանս կրթությունը**»:

Հաշվեքննության առաջնահերթությունները սահմանվում են՝ ելնելով հաշվեքննության գործառույթի միջոցով հանրային շահին միտված հավելյալ արժեք ստեղծելու ներուժից, հիմնախնդրի էականությունից և հաշվեքննելիությունից: Միջնաժամկետ հորիզոնում արտաքին պետական հաշվեքննության 7 առաջնահերթություններն են հանդիսանալու՝ (1) Մարդուն մատչելի, հասանելի, որակյալ և դիմակայուն առողջապահությունը, (2) Մարդուն մատչելի և որակյալ ցկյանս կրթությունը, (3) Մարդուն շրջապատող մաքուր և անվտանգ միջավայրը, (4) Մարդուն մատչելի և արդյունավետ արդարադատությունը, (5) Արտահանմանը միտված, գիտահեն և մրցակցային տնտեսության զարգացումը, (6) Պետական ֆինանսների և սեփականության կառավարման ինստիտուտների զարգացումը, (7) Ներդաշնակ զարգացող համայնքները: Հաշվեքննության առաջնահերթություններին, ինչպես նաև յուրաքանչյուր առաջնահերթության շրջանակում ձևակերպված հաշվեքննության հիմնական ուղղություններին հնարավոր է ծանոթանալ «Հաշվեքննիչ պալատի 2025-2027թթ. առաջնահերթությունները» փաստաթղթում, որի էլեկտրոնային տարբերակը հասանելի է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում. www.armsai.am:

Բովանդակություն

Հապավումներ **5**

Ամփոփագիր **6**

Ներածություն **7**

Հաշվեքննության արդյունքները **14**

Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաներն ամբողջությամբ և ժամանակին չեն բացահայտվել 14

Մոնիթորինգի համակարգն ունի չիրացված ներուժ արդյունավետ վաղ ահազանգում ապահովելու տեսանկյունից 22

Ուղղորդման միջոցառումները թույլ չեն տվել հասնել սահմանված թիրախներին 34

Եզրակացություն **46**

Առաջարկություններ և արձագանք **47**

Հաշվեքննության մասին **56**

Հավելված 1. Պարտադիր կրթության բնագավառին առնչվող հիմնական մասնակիցները և նրանց պարտականությունները 60

Հապավումներ

ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԽՀՀ	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով
ԽՀՄ	Խնամակալության և հոգաբարձության մարմին
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակ
ԿԿՏՀ	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
ԿՄՕ	«Կրթության մասին» օրենք
ԿՏԱԿ	«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ՀԾՀ	Հանրային ծառայությունների համարանիշ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄՕ	«Հանրակրթության մասին» օրենք
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄՄԾ	Միասնական սոցիալական ծառայություն
ՅՈՒՆԵՍԿՕ	Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն
ՅՈՒՆԻՍԵՖ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՆՄՄԿ	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՊԿԴՄԵ	Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխա
ՍԷԿՏ	Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՄԱԿ	Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԻՆՉՈ՞Ւ ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքով նախատեսված ծրագրի իրականացմամբ 2030թ. դրությամբ ապահովման ենթակա արդյունքներից (վերջնական թիրախներից) է այն, որ «ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից»:

Որպես հանրակրթության բյուջետային ծրագրի վերջնական արդյունքի քանակական թիրախային ցուցանիշ էր սահմանվել՝ 12-ամյա պարտադիր կրթության համակարգում ընդգրկվածությունը 2024թ.-ին 99%-ի հասցնելը՝ 83.2% ելակետային ցուցանիշի համեմատությամբ:

Մինչդեռ, վերջնական արդյունքի փաստացի ցուցանիշը 2024թ.-ին կազմել է 82.5%՝ չհասնելով սահմանված թիրախին և 0.7%-ային կետով զիջելով 2019-2020թթ. ելակետային մակարդակը:

Ի՞ՆՉ ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ. 2024թ. հունվար ամսվա դրությամբ պարտադիր կրթությունից դուրս են մնացել 19605 անձինք, որոնցից 12632-ը կամ 64.4%-ը երբևէ որևէ հաստատությունում հաշվառված չեն եղել, իսկ 6973-ը կամ 35.6%-ը հաճախել են որևէ հաստատություն և հետո հայտնվել կրթությունից դուրս վիճակում:

Ընդ որում, 2024թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված է եղել 6-ից 19 տարեկան 634704 անձ, իսկ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (ԿԿՏՀ)՝ 523405 անձ: Այսինքն, 6-ից 19 տարեկան 111299 անձ հաշվառված չի եղել ԿԿՏՀ-ում: Առկա չեն եղել նաև տվյալներ, թե 6-ից 19 տարեկան անձանցից քանիսն են գտնվել ՀՀ-ից դուրս և ընդգրկված չեն եղել այլ երկրի կրթական համակարգում:

Հաշվեքննության հաջորդ արձանագրման համաձայն, պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց՝ կրթությունից դուրս մնալու պատճառները չեն հաշվառվել և դրանց համակարգված վերլուծություն չի իրականացվել:

Պարտադիր կրթության համակարգում դպրոցական տարիքի անձանց ներգրավումն ապահովելու համար օրենսդրական պարտավորություն ունեցող՝ Խնամակալության և հոգաբարձության մարմինների (ԽՀՄ) կողմից 2024թ.-ին հայտնաբերվել են՝ ըստ ԿԿՏՀ տվյալների, պարտադիր կրթությունից դուրս մնացած 19605 անձանցից 695-ը (3.5%), իսկ նրանցից կրթության համակարգում ընդգրկվել են միայն 202-ը (1%-ը):

Հաշվեքննիչ պալատը, կրթության բնագավառում պետական քաղաքականության բաղադրիչներից մեկի՝ պարտադիր կրթության համակարգում շահառուների ընդգրկվածության նպատակով իրականացվող միջոցառումների արդյունավետությունը գնահատելու համար որպես չափանիշներ կիրառել է օրենսդրությամբ և քաղաքականության միջոցառումների ծրագրերով հայտարարված նպատակներն ու հանձնառությունները: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ հաշվեքննության առարկայի շրջանակում *չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը*, քանի որ պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց բացահայտման, մոնիթորինգի և կրթական հաստատություններում ընդգրկման համակարգը չի ապահովել 2024թ. համար պարտադիր կրթության համակարգում ընդգրկվածության 99% ցուցանիշը (այն կազմել է 82.5%)՝ զիջելով ելակետային մակարդակը և չմոտեցնելով 2030թ. վերջնական թիրախին:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ. Հաշվեքննության արդյունքներով Հաշվեքննիչ պալատը ներկայացրել է առաջարկներ, որոնք ուղղված են պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց ամբողջությամբ ու ժամանակին բացահայտմանը, մոնիթորինգի համակարգի բարելավմանը և կրթության համակարգում ընդգրկման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը:

Ներածություն

1. **Մարդու հիմնական իրավունքներից մեկի՝ կրթության իրավունքի իրագվածության,** հատկապես՝ պարտադիր կրթության համակարգում երեխաների ներառման աստիճանը, անհատի և դրանով պայմանավորված նաև պետության, հասարակության ու տնտեսության զարգացումը կանխորոշող էական գործոն է:

2. **Հետազոտություններով[1] հիմնավորված է համարվում հանրակրթության սոցիալական և տնտեսական օգուտների զգալի ներուժի առկայությունը:** Մասնավորապես, կուտակված տեղեկատվության վերլուծությամբ գնահատվում է, որ հանրակրթությունը կարևոր նախադրյալ է կենսամակարդակի բարձրացման (Գծապատկեր 1), առողջության և սոցիալական համերաշխության, ինչպես նաև գործազրկության ու հանցավորության ցածր աստիճանի հասնելու հարցում: Այդ օգուտներն արտահայտվում են նաև պետական բյուջեում՝ հարկային եկամուտների բարձր ցուցանիշի և սոցիալական աջակցության, առողջապահության ու արդարադատության իրականացմանն ուղղված հանրային ծախսերի համեմատաբար ցածր բեռի տեսքով:

3. **Աշխարհում շուրջ 251 միլիոն երեխա դպրոց չի հաճախում[2]:** Խնդրի լուծման նպատակով միջազգային հանրությունը[3] նպատակ է հայտարարել մինչև 2030թ. ապահովել ներառական և որակյալ կրթություն բոլորի համար ու խրթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունը, որի գնահատման ցուցիչ է ճանաչել հանրակրթությունում համախառն ընդգրկվածության աստիճանը[3]: Միջազգային ջանքերի ակտիվացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ 2010թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտի կողմից «Դպրոցից դուրս մնացած երեխաների համաշխարհային նախաձեռնության» մեկնարկը, որը նպատակ է հետապնդում նպաստել կրթությունից դուրս մնացած երեխաների թվի կայուն և էական նվազեցմանը:

---

[1] Improving Education Participation. Policy and Practice Pointers for Enrolling All Children and Adolescents in School and Preventing Dropout. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 2, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2017, Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016.

[2] Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների, 2023թ. դրությամբ, Աղբյուր՝ Global Education Monitoring Report 2024/5: Leadership in education – Lead for learning. Paris, UNESCO, 2024:

[3] ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ», որի մանրամասները ներկայացվում են 10.6-րդ կետում:

Գծապատկեր 1. **Աղքատությունն ըստ կրթության մակարդակի ՀՀ-ում (%), 2023թ.**



Աղբյուր՝ *Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2024, ՎԿ, էջ 44:*

4. Գլոբալ թիրախներին համահունչ, Հայաստանի Հանրապետությունը «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքով նախատեսված ծրագրի իրականացմամբ, 2030թ. դրությամբ ապահովման ենթակա արդյունքների (վերջնական թիրախների) շարքում ամրագրել է, որ *«ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից»*:

5. Այս ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր, մասնավորապես՝ Կառավարության որոշմամբ 2021թ.-ին հաստատվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը (այսուհետ՝ նաև Կարգ), ինչպես նաև գործարկվել է ԿԿՏՀ-ի մաս կազմող «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգը (այսուհետ՝ նաև Ենթահամակարգ):

6. Համադրելի երկրների համեմատությամբ ՀՀ-ում կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը հարաբերականորեն բարձր է (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. **Կրթությունից դուրս մնացած երեխաների տեսակարար կշիռը (%), 2023թ.**



Աղբյուր՝ *ՅՈՒՆԵՍԿՕ, Global Education Monitoring Report 2024/5: Leadership in education – Lead for learning. Paris, UNESCO, 2024, Out-of-school rate, %:*

7. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության ոլորտում ընդգրկվածությունը 2024թ. կազմել է 82.5%: Ընդ որում, աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշի գծով արձանագրվել է նվազման միտում (2019 և 2020 թվականներին՝ 83.2%), որը չի նպաստում 2030թ.-ի նպատակային ցուցանիշի ապահովմանը:

Գծապատկեր 3. **Աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը, %**



Աղբյուր՝ *2020թ.՝ ՎԿ, 2024թ.՝ ԿԳՄՄՆ՝ հիմք ընդունելով բնակչության պետական ռեգիստրի և ԿԿՏՀ-ի ցուցանիշները, 2024թ. թիրախային՝ ՄԺԾԾ, 2022-2024թթ.:*

8. Որպես հանրակրթության բյուջետային ծրագրի վերջնական արդյունքի քանակական թիրախային ցուցանիշ էր սահմանվել՝ 12-ամյա պարտադիր կրթության համակարգում ընդգրկվածությունը 2024թ.-ին 99%-ի հասցնելը[4]՝ 83.2% ելակետային ցուցանիշի համեմատությամբ: Մինչդեռ, վերջնական արդյունքի փաստացի ցուցանիշը 2024թ.-ին կազմել է 82.5%՝ չհասնելով սահմանված թիրախին և զիջելով ելակետային մակարդակը (Գծապատկեր 3):

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

9. Տվյալ հաշվեքննության նպատակն է՝ գնահատել պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների ընդգրկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը և գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել ընդգրկվածության բարձրացմանը միտված առաջարկություններ:

[4] Աղբյուր՝ ՄԺԾԾ 2022-2024թթ., հավելված N5, 1146 ծրագիր:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Հաշվեքննության առարկային վերաբերելի՝ պետության նպատակներն ու հանձնառությունները, որոնք տվյալ հաշվեքննության համար ծառայել են որպես բարձր մակարդակի (նպատակային արդյունավետության գնահատման) չափանիշներ, հետևյալն են.

10.1. **ՀՀ Սահմանադրության** համաձայն, յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Սահմանադիրը նախատեսել է նաև «պարտադիր կրթություն» հասկացությունը՝ վերջինիս ծրագրերի և տևողության սահմանումը պատվիրակելով օրենսդրին (հոդվ. 38, մաս 1):

10.2. ՀՀ-ում **12-ամյա** միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական **կրթությունը պարտադիր է** մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ (ԿՄՕ, հոդվ. 18, մաս 7):

10.3. **«ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքով** նախատեսված ծրագրի իրականացմամբ 2030թ. դրությամբ ապահովման ենթակա արդյունքներից (վերջնական թիրախներից) է այն, որ «ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից» (Հավելվածի 86-րդ կետի 7-րդ ենթակետ):

10.4. Կրթության բնագավառում պետական քաղաքականության **սկզբունքներից** են՝ կրթության մատչելիությունը, շարունակականությունը և հաջորդականությունը (ԿՄՕ, հոդվ. 5): Հանրակրթության բնագավառում պետությունը *երաշխավորում* է հանրակրթության հավասար հնարավորությունների ու մատչելիության սկզբունքների ապահովումը (ՀՄՕ, հոդվ. 5, մաս 2, կետ 2): Հանրակրթության *նպատակն* է՝ սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումը, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը (ԿՄՕ, հոդվ. 18, մաս 1):

10.5. Պետությունը ՀՀ քաղաքացիների համար *երաշխավորում* է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին … մասնագիտական կրթություն (ԿՄՕ, հոդվ. 6, մաս 3):

10.6. **ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ի նպատակներից**[5] է՝ ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն *բոլորի համար* և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ (ԿԶՆ 4), որի շրջանակներում սահմանված ցուցիչներից է հանրակրթությունում համախառն ընդգրկվածությունը (ԿԶՆ 4.3.1.ա):

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Պարտադիր կրթությունից դուրս մնացած և դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող երեխաների մասով մասնակցություն ունեցող անձանց (մարմինների) շրջանակը բավական լայն է և ներառում է ԿԳՄՍՆ-ին, ԱՍՀՆ-ին, ՆԳՆ-ին, ԱԱԾ-ին, ՏԻՄ-երին (ԽՀՄ-ներին), տարածքային կառավարման մարմիններին (մարզպետարաններին), երեխայի ծնողին, ուսումնական հաստատությանը, տնօրենին, մանկավարժական աշխատողին, ՏՄԱԿ-ներին և այլն: Վերջիններիս՝ խնդրո առարկային վերաբերելի հիմնական պարտականություններն ամփոփված են Հավելված 1-ում:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ

12. Հաշվեքննությունը կենտրոնացել է պարտադիր կրթությունից դուրս մնացած և դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող երեխաների բացահայտման, մոնիթորինգի և ուղղորդման (կրթության մեջ ներառման) գործընթացը **թվային փոխակերպման** միջոցով բարելավելու վրա, մասնավորապես այդ գործընթացին վերաբերելի՝

- **տվյալների** հասանելիության, դրանց որակի և պետական համակարգում առկա տվյալների տարբեր էլեկտրոնային շտեմարանների փոխգործելիության արդյունավետության վրա.
- տարբեր գերատեսչությունների գործողությունների կոորդինացման, այդ թվում՝ դրանք միավորող **էլեկտրոնային կառավարման համակարգի** արդյունավետության վրա:

13. Հաշվեքննության հարցերը, ժամկետները, մոտեցումը և մեթոդաբանական այլ մանրամասները ներկայացված են «Հաշվեքննության մասին» բաժնում:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԷԱԿԱՆ

14. Հաշվեքննության նշված կենտրոնացման էականությունը պայմանավորված է նրանով, որ արդյունավետ թվային փոխակերպման դերը նշանակալի է տվյալ բնագավառում՝

- **Տվյալահեն (ապացույցների վրա հիմնված) քաղաքականության** մշակման և իրականացման համար, մասնավորապես հիմնվելով՝
    - պարտադիր կրթությունից դուրս մնացած և դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող երեխաների բացահայտման ու մոնիթորինգի վրա.
    - նրանց անհատական, տնային տնտեսությունների ու համայնքների բնութագրերի վեր հանման վրա՝ որոշելու համար պարտադիր կրթությունից դուրս մնալու / ռիսկի գերակա պրոֆիլները.

  - այն հիմնական պատնեշների վեր հանման վրա, որոնք պայմանավորում են պարտադիր կրթությունից դուրս մնալը.
  - կառավարչական որոշումներն արժանահավատ տվյալներ պարունակող՝ միասնական էլեկտրոնային համակարգում կուտակվող տեղեկատվության հիման վրա կայացնելու անհրաժեշտության վրա՝ որպես հայտարարված նպատակներին միտված քաղաքականության որոշումների մշակման և իրականացման կարևոր նախադրյալ:
- **Համապետական մոտեցում** (whole-of-government approach) – նկատի ունենալով պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների թվի նվազեցման համար անհրաժեշտ հանրային կառավարման գործառույթների և դրանք իրականացնող հանրային կառավարման մարմինների մեծաթիվ լինելը, դրանց ջանքերը հնարավոր է ներդաշնակեցնել արդյունավետ էլեկտրոնային կառավարման համակարգի շնորհիվ:

Հաշվեքննության արդյունքները

Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաներն ամբողջությամբ և ժամանակին չեն բացահայտվել

ԻՆՉՈ՞Ւ Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

15. Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաներին կրթական համակարգ ընդգրկելուն ուղղված միջոցառումների արդյունավետությունը մեծապես կանխորոշվում է նշված երեխաներին ամբողջությամբ և ժամանակին բացահայտմամբ:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

16. Հաշվեքննության տվյալ արդյունքը պայմանավորող հիմնական պատճառներն են՝

- «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգի ուշ գործարկումը.
- ՀՀ-ից դուրս գտնվող անձանց վերաբերյալ տեղեկատվության սահմանափակումները.
- ԿԿՏՀ-ի և տվյալների այլ շտեմարանների փոխգործելիության սահմանափակումները.
- տեղեկատվական համակարգում չհաշվառված («անտեսանելի») երեխաների բացահայտման ընթացակարգերի սահմանափակ բնույթը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ[6]

17. **ՀՀ Սահմանադրության** համաձայն, յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք (հոդվ. 38, մաս 1):

18. ՀՀ-ում 12-ամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը **պարտադիր է** մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ[7]:

Աղբյուր՝ ԿՄՕ, հոդվ. 18, մաս 7:

19. Հաստատություն, ՆՄՄԿ չհաճախած կամ հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված չլինելու դեպքում պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց բացահայտելու համար ՀՀ ԿԳՄՍՆ ԿՏԱԿ ՊՈԱԿ-ը յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր և հունվար ամիսներին, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և ԿԿՏՀ-ի տվյալները, ԿԳՄՍՆ-ին ներկայացնում է 6-ից մինչև 19 տարին չլրացած այն անձանց տվյալները, որոնք որևէ Հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված չեն:

Աղբյուր՝ Կարգի 5-րդ կետ:

20. Հորիզոնական տեղեկատվական հոսքերում անհրաժեշտ է վերացնել խըզումը՝ երաշխավորելով, որ սահմանված տարիքի ողջ բնակչությունը մշտադիտարկվի կրթության ոլորտի լիազոր նախարարության կողմից, այլ ոչ թե սովորողների այն ենթաբազմությունը, որը գրանցված է կրթության ոլորտի լիազոր նախարարության տվյալների շտեմարաններում:

Աղբյուր՝ Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 48, 18:

21. ԿԿՏՀ-ի նպատակն է՝ տրամադրել ժամանակին և հուսալի տվյալներ կրթության պլանավորման ու կառավարման համար, ինչպես նաև աջակցել ապացույցների վրա հիմնված քաղաքականության որոշումների կայացմանը:

Աղբյուր՝ Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 10:

[6] Հաշվեքննության տվյալ հարցին վերաբերելի:

[7] Պարտադիր միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պահանջը չի տարածվում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի խմբերի վրա: Պարտադիր 12-ամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար սովորողի 19 տարին լրանալու տարիքային սահմանափակումը չի տարածվում ՔԿՀ-ներում ազատազրկման ձևով պատիժ կրող այն դատապարտյալների վրա, որոնց պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի: Տվյալ անձինք իրենց ցանկությամբ կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ) ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (ԿՄՕ, 18-րդ հոդվ., 7-րդ մաս):

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

22. Պարտադիր կրթությունից դուրս մնացած են համարվում 6-ից մինչև 19 տարին չլրացած՝ ՀՀ տարածքում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ նաև Հաստատություն), հանրակրթական հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա ՆՄՄԿ-ում չհաշվառված կամ հաշվառված, բայց մեկ ամսվա ընթացքում ամսվա համար գումարային հաշվարկով 10 աշխատանքային օրից ավելի չհաճախած անձինք:

Աղբյուր՝ Կարգի 2-րդ կետ:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

Ենթահամակարգի ուշ գործարկում

23. Կարգը հաստատվել էր 2021թ. փետրվարին՝ նախատեսելով «ՊԿԴՄԵ-ների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգի առկայության պահանջ: ՊԿԴՄԵ-ների բացահայտման և ուղղորդման գործընթացները պետք է կառավարվեին նշված էլեկտրոնային ենթահամակարգի միջոցով: Վերջինս ենթադրում էր նաև յուրաքանչյուր ուսումնական տարվա հունվար և սեպտեմբեր ամիսներին՝ որևէ հաստատությունում չհաշվառված անձանց վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում Ենթահամակարգ՝ այնուհետև կրթության մեջ նշված անձանց ընդգրկումն ապահովելու համար: Ըստ այդմ, Կառավարության որոշմամբ նախատեսված դրույթը պետք է կատարվեր 2021թ. սեպտեմբերն ընդգրկող ժամանակաշրջանից ի վեր, քանի որ նշված դրույթի գործողությունը տարաժամկետող որևէ անցումային դրույթ Կարգում Կառավարությունը չէր նախատեսել: Մինչդեռ, էլեկտրոնային ենթահամակարգը գործարկվել է ավելի քան երեք տարի անց՝ 2024թ. մայիսի 1-ից: Արդյունքում, սահմանափակվել է պատասխանատու և շահագրգիռ մարմինների կողմից, միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի շրջանակում ջանքերի համադրմամբ, ՊԿԴՄԵ-ներին բացահայտելու և ուղղորդելու հնարավորությունը:

Տվյալների ոչ ժամանակին լինելը

24. Բնակչության պետական ռեգիստրի և ԿԿՏՀ-ի տվյալները համեմատվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա հունվար և սեպտեմբեր ամիսներին: 2024թ. հունվար ամսվա վերաբերյալ տվյալները Ենթահամակարգում հասանելի են դարձել 2024թ. մայիսից հետո, իսկ 2024թ. սեպտեմբեր ամսվան վերաբերելի տվյալները 2025թ. փետրվարի դրությամբ Ենթահամակարգում դեռևս հասանելի չեն եղել:

25. Գործող կարգով սահմանված չեն ընթացակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեին սահմանահատումների հիման վրա ճշտելու ՀՀ-ից դուրս գտնվող 6-ից մինչև 19 տարեկան անձանց թիվը: Արտերկիր մեկնելու նպատակով հաստատությունից, ՆՄՄԿ-ից սովորողին ազատելու վերաբերյալ սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի առկայության դեպքում, երեխայի՝ արտերկիր մեկնելու կամ չմեկնելու վերաբերյալ փաստը բացահայտվում է երեխայի բնակության վայրի ԽՀՄ-ի կողմից իրականացված հսկողության արդյունքում[8]: Եթե ԽՀՄ-ն իր համայնքում չի հայտնաբերում անձին, ապա հայտ է ուղարկում Ոստիկանությանը (ՆԳՆ-ին)[9]: Այլ կերպ ասած, գործող կարգավորումներով սովորողին հայտնաբերելու հիմնական բեռը դրված է ԽՀՄ-ի և Ոստիկանության վրա, որը ծախսարդյունավետ և նպատակային արդյունավետ մոտեցում չէ՝ հաշվի առնելով ՍԷԿՏ-ում նշված տեղեկատվության առկայությունը:

26. Ընդ որում, միջոցառումների արդյունավետությունն էապես կախված է ՊԿԴՄԵ-ների վերաբերյալ իրական ժամանակում տեղեկատվության առկայությունից: Խնդիրը կարող է լուծվել ԿԿՏՀ-ի և ՍԷԿՏ-ի միջև փոխգործելիության ապահովումը հնարավոր դիտարկվելու պարագայում:

27. Չնայած կարգավորումների բացակայությանը, ՍԷԿՏ-ից սահմանահատումների վերաբերյալ ստացված տեղեկատվության հիման վրա ԿԳՄՍՆ-ն իրականացրել է 2024թ. հունվարին վերաբերելի՝ որևէ հաստատությունում չըհաշվառված անձանց ցանկի ճշգրտում և ճշգրտված տվյալների ներբեռնում Ենթահամակարգ[10]:

[8] Կարգի 8.1 կետի համաձայն, արտերկիր մեկնելու նպատակով հաստատությունից, ՆՄՄԿ-ից սովորողին ազատելու վերաբերյալ սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի առկայության դեպքում, երբ երեխայի բնակության վայրի ԽՀՄ-ն հսկողության արդյունքում բացահայտում է երեխայի՝ արտերկիր չմեկնելու վերաբերյալ փաստը, ձեռնարկում է Կարգով սահմանված գործողություններ՝ սովորողի պարտադիր կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով:

[9] Կարգի 10-րդ կետ:

[10] 2025թ. փետրվարի դրությամբ Ենթահամակարգում հասանելի ամենաթարմ տվյալներն են:

Տվյալների ոչ ամբողջական լինելը

28. Չեն իրականացվել ընթացակարգեր և առկա չեն տվյալներ առ այն, թե ՀՀ-ից դուրս գտնվող 6-ից մինչև 19 տարեկան անձանցից քանիսն են ընդգրկվել այլ երկրի կրթական համակարգում և քանիսն են գտնվել կրթական համակարգից դուրս: Նշված խնդիրը կարող է կարգավորվել միջպետական համագործակցության շրջանակներում (հատկապես՝ հիմնական միգրացիոն ուղղություններ հանդիսացող պետությունների հետ), տվյալ երկրի համապատասխան տվյալների շտեմարաններում ՀՀ քաղաքացի հանդիսացող 6-ից մինչև 19 տարեկան անձանց՝ կրթական համակարգում ընդգրկվածության վերաբերյալ տեղեկատվության փոխանակմամբ: Հաշվի առնելով, որ ՀՀ-ից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների մասով նույնպես պետության պոզիտիվ պարտականությունները պահպանվում են, ինչպես նաև այն հանգամանքը, որ նշված քաղաքացիները միաժամանակ հետո կարող են վերադառնալ ՀՀ, մարդկային կապիտալի հնարավոր կորուստը կանխարգելելու նպատակով, արտերկրում պարտադիր կրթության տարիքի ՀՀ քաղաքացիների՝ կրթական համակարգին ինտեգրվելուն կարող են նպաստել ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինները՝ հասանելիություն ստանալով ԿԿՏՀ-ի Ենթահամակարգին:

Պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց թիվը

29. Ենթահամակարգում առկա տվյալների համաձայն, 2024 թվականին պարտադիր կրթությունից դուրս են մնացել 19605 անձինք, որոնցից 12632-ը կամ 64.4%-ը երբևէ որևէ հաստատությունում հաշվառված չեն եղել, իսկ 6973-ը կամ 35.6%-ը հաճախել են որևէ հաստատություն և հետո հայտնվել կրթությունից դուրս վիճակում[11]:

30. Կրթական համակարգում ընդգրկված, այնուհետև պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հիմնական մասը կազմում են 9-րդ և 10-րդ դասարանցիները (Գծապատկեր 4):

[11] Մեկ ամսվա ընթացքում 10 աշխատանքային օրից ավելի չհաճախած անձինք:

Գծապատկեր 4. **Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների տեսակարար կշիռն ըստ դասարանների**



Աղբյուր՝ *Ենթահամակարգ:*

31. 2024թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ 111299 անձ (6-ից մինչև 19 տարեկան) հաշվառված չէ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (Աղյուսակ 1): 2024թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված է եղել 6-ից մինչև 19 տարեկան 634704 անձ, իսկ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ 523405 անձ: Այսինքն՝ 6-ից մինչև 19 տարեկան 111299 անձ հաշվառված չէ ԿԿՏՀ-ում[12]:

[12] Աղբյուր՝ ԿԳՄՄՆ, բնակչության պետական ռեգիստրի և ԿԿՏՀ-ի տվյալների համեմատության արդյունքներ:

Աղյուսակ 1. **Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում չհաշվառված 6-19 տարեկան անձանց թիվը, 2024թ.**

Տարիք*	Անձանց թիվ
6	5483
7	6076
8	6744
9	6943
10	7058
11	7175
12	7687
13	8128
14	8633
15	9463
16	9586
17	9908
18	9261
19	9154
Ընդամենը	**111299**

Տարբերությունը հաշվարկված է ըստ տարիքի, բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա:

* Լրացել է կամ լրանում է 2024թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Աղբյուր՝ ԿԳՄՍՆ:

Տեղեկատվական շտեմարաններում չհաշվառված («անտեսանելի») երեխաներ

32. Սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) պետք է ներկայացնի սովորողի ՀԾՀ-ի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը, բացառությամբ պետական հաստատության առաջին դասարան ընդունվելու դեպքի[13]: Սովորողի ընդգրկումը պետական ուսումնական հաստատության առաջին դասարան կատարվում է հայտագրման միջոցով, որն իրականացվում է ԿՏԱԿ-ի կողմից վարվող «Սովորողներին դպրոց հայտագրելու էլեկտրոնային համակարգ»-ի միջոցով (hayt.emis.am)[14], որը գործընթացի մեկնարկի համար պարունակում է միայն «Մուտքագրեք ՀԾՀ-ն» հրահանգը: Սահմանված չեն միաժամանակ և՛ ՀԾՀ, և՛ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանք չունեցող երեխաներին ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունելու և ընդունումից հետո փաստաթղթավորման հարցում ուղղորդելու իրավական ընթացակարգեր:

[13] Կրթության և գիտության նախարարի 24.11.2010թ. թիվ 1640-Ն հրամանով հաստատված կարգի 25-րդ կետի 2-րդ ենթակետ:

[14] Նույն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետ:

Ներդիր 1.

«Անտեսանելի» երեխաների վերաբերյալ

Հանրակրթությունից դուրս գտնվող «անտեսանելի» երեխաներն այն երեխաներն են, որոնք գրանցված չեն պետական տվյալների շտեմարաններում: Տվյալ խմբում ընդգրկված են, որպես կանոն, ամենախոցելի երեխաները: Նրանց պարագայում առկա է փաստաթղթերի բացակայության (օր.՝ ծննդականի) բարձր ռիսկ: Նման դեպքեր կարող են ի հայտ գալ տնային ծնունդների դեպքում, փախստականների ու տեղահանված անձանց, միգրանտների, անօթևան երեխաների մասով: Նման դեպքերը բացահայտելու հնարավոր մոտեցումներից են.

- թույլ տալ երեխաներին ընդգրկվել հանրակրթական հաստատություն՝ առանց որևէ փաստաթղթի՝ միաժամանակ դպրոցներին տրամադրելով ուղեցույցներ, թե ինչպես աջակցել ընտանիքներին ու երեխաներին՝ համապատասխան փաստաթղթերի ձեռք բերման հարցում: Որոշ երկրների փորձը ցույց է տալիս, որ թեև քաղաքականությունը ենթադրում է, որ դպրոցները ներառեն երեխաներին կրթական համակարգում առանց փաստաթղթերի, գործնականում նշված երեխաները կարող են շարունակել մերժվել դպրոց ընդունման հարցում.
- ՀԿ-ների, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ համագործակցությունը, որոնք մասնագիտացած են տվյալ ոլորտում և կարող են տիրապետել առանց փաստաթղթերի անձանց վերաբերյալ տեղեկությունների.
- այլ գերատեսչությունների բազաներում ի հայտ եկող դեպքերը (օրինակ՝ առողջապահության նախարարության կամ սոցիալական բնագավառի լիազոր մարմնի (նպաստների ցուցակների համատեքստում) շտեմարաններում):

Աղբյուր՝ *Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 55, Global Out-of-School Children Initiative, Operational Manual, 2015, UNICEF:*

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

33. Հաշվեքննության տվյալ արդյունքին վերաբերող առաջարկությունները ներկայացված են 81-րդ կետում (Առաջարկություններ N 2.1, 2.2, 2.3, 2.3.1, 2.3.2):

Մոնիթորինգի համակարգն ունի չիրացված ներուժ արդյունավետ վաղ ահազանգում ապահովելու տեսանկյունից

ԻՆՉՈ՞Ւ Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

34. Պարտադիր կրթությունից դուրս մնալն աստիճանական, բազմաշերտ գործընթաց է և ոչ՝ մեկանգամյա իրադարձություն: Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի ենթակա սովորողների տարբերակումն ըստ ռիսկայնության մակարդակների ու պատճառների, կրթության մեջ ընդգրկվածության հիմնական պատնեշների բացահայտումը, թույլ կտա ապահովել տվյալների (ապացույցների) վրա հիմնված արձագանք՝ լինելով ավելի հասցեական և մեծացնելով ռիսկերի կառավարման արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, ավելի ծախսարդյունավետ է՝ կանխել դուրս մնալը, քան առերեսվել խնդրին, երբ այն արդեն տեղի է ունեցել:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

35. Հաշվեքննության տվյալ արդյունքը պայմանավորող հիմնական պատճառներն են՝

- պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի ցուցիչների կազմը համապարփակ չէ.
- պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի սահմանման պատճառով, անձը կարող է դուրս մնալ կրթությունից՝ առանց նախապես ռիսկի գոտում հայտնվելու.
- հաճախումների ամբողջական հաշվառման ռիսկերը.
- առկա չէ բացակայությունների պատճառների հաշվառման պահանջ:

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

36. «Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող» են համարվում 6-ից մինչև 19 տարին չլրացած՝

1) հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված, սակայն մեկ ամսվա ընթացքում 6 աշխատանքային օր անընդմեջ չհաճախած սովորողները.

2) ՆՄՄԿ-ում կրթությունն ընդհատած սովորողները…

3) հաստատություն, ՆՄՄԿ հաճախած, սակայն ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի (արտերկիր մեկնելու նպատակով) հիման վրա ուսումն անավարտ թողած սովորողները:

Աղբյուր՝ Կարգի 3-րդ կետ:

37. Հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված սովորողների՝ մեկ ամսվա ընթացքում 6 աշխատանքային օր անընդմեջ չհաճախելու դեպքում ԿԿՏՀ-ում ինքնաշխատ եղանակով ստեղծվում է *նախնական հայտ*: Հաստատության, ՆՄՄԿ-ի տնօրենը նախնական հայտի ձևավորման պահից սկսած՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ փակում է նախնական հայտը՝ նշելով հաստատման կամ փակման պատճառները՝ սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացրած *գրավոր բացատրագրի* հիման վրա:

Աղբյուր՝ Կարգի 7-րդ կետ:

38. Սահմանման 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված դեպքերում ինքնաշխատ եղանակով ստեղծվում է հայտ, որը հասանելի է տարածքային ԽՀՄ-ին: Տվյալ դեպքերում հայտերի ստեղծող է համարվում տարածքային ԽՀՄ-ն:

Աղբյուր՝ Կարգի 8-րդ կետ:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

39. Արդյունավետ մոնիթորինգի իրականացումը ենթադրում է **վաղ ահազանգման համակարգի** ստեղծում, որը պետք է թույլ տա կրթական հաստատություններին և կրթության բնագավառի իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ բացահայտելու որոշակի կարիքներով սովորողներին և աջակցելու նրանց ժամանակին և համարժեք կերպով: Նշված համակարգի ներդրումը ենթադրում է.

- ցուցիչների ընտրություն[15].
    - ռիսկի, պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկ գեներացնող հիմնական գործոնների (սովորողի բնութագրերի) բացահայտում և ըստ առաջնահերթության դասակարգում.
    - պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկ գեներացնող յուրաքանչյուր գործոնի համար ցուցչի սահմանում և տվյալները հավաքելու ընթացակարգերի սահմանում.
    - ցուցիչների կշիռների որոշում՝ ապահովելու համար վաղ ահազանգման համակարգի բավարար զգայունությունը պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի նկատմամբ.
    - ցուցիչների մեծությունների սահմանում, որոնց դեպքում սովորողները կնույնականացվեն, որպես ռիսկի գոտում գտնվող.
- պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող սովորողների բացահայտում.

[15] Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող երեխաներին բացահայտելու առաջին խոչընդոտը պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի հուսալի ցուցիչների բազմության (երկրի / տեղական համատեքստը հաշվի առնող) բացակայությունն է:

- պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող սովորողների՝ ռիսկի գոտուց դուրս գալու համար կարիքների գնահատում.
- արձագանքող միջոցառումների իրականացում և մոնիթորինգ.
- համակարգի գնահատում և զարգացում:

Աղբյուր՝ Early warning systems for students at risk of dropping out - Policy and practice pointers for enrolling all children and adolescents in school and preventing dropout. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention - Volume 2, UNICEF, 2017, Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 58:

40. Վաղ ահազանգման համակարգի առանցքային պահանջ է **բացակայությունների մոնիթորինգը**: Վերջինս ենթադրում է յուրաքանչյուր սովորողի համար մոնիթորինգի ենթարկել.

- բացակայության տևողությունը.
- բացակայության պատճառ(ներ)ը.
- տարբերակել բացակայության հարգելի և անհարգելի պատճառները:

Աղբյուր՝ Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 62, 23, 35:

41. Չնայած բացակայությունները պարտադիր կրթությունից դուրս մնալու առանցքային ցուցիչ են, այնուհանդերձ, վաղ ահազանգման համակարգը չպետք է հիմնված լինի մեկ ցուցչի վրա, քանի որ ռիսկի մի քանի գործոններով բնութագրվող սովորողներին բնորոշ է կրթությունից դուրս մնալու ավելի մեծ հավանականություն:

Աղբյուր՝ Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 57:

42. Մոնիթորինգի համակարգը ենթադրում է արդյունավետ տեղեկատվական հոսքեր՝ ինչպես ուղղաձիգ (տեղական մակարդակից դեպի կենտրոնական կառավարության մարմիններ և ընդհակառակը[16]), այնպես էլ՝ հորիզոնական (պետական կառավարման մարմինների միջև): Հորիզոնական տեղեկատվական հոսքերում անհրաժեշտ է վերացնել խզումը՝ երաշխավորելով, որ սահմանված տարիքի ողջ բնակչությունը կարող է մշտադիտարկվել կրթության ոլորտի լիազոր մարմնի կողմից, այլ ոչ թե սովորողների այն ենթաբազմությունը, որը գրանցված է կրթության ոլորտի լիազոր նախարարության տվյալների շտեմարաններում:

Աղբյուր՝ Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume

[16] Տեղեկատվությունը պետք է հոսի ինչպես վարից վեր, այնպես էլ՝ վերից վար: Հաճախ այն հոսում է միայն դպրոցներից դեպի վեր: Մինչդեռ, անհրաժեշտ է, որ տեղի ունենա տեղեկատվության երկկողմ փոխանակում, երբ նրանք, ովքեր տեղեկացնում են դեպքերի մասին, նաև ստանում են հետադարձ կապ, որը օգտակար է իրենց հետագա գործողությունների համար: Վերջինս նաև խթանի հավաստի տեղեկատվության տրամադրումը:

1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 46, 48:

43. Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող սովորողների մոնիթորինգի համար ԿԿՏՀ-ն պետք է հնարավորություն տա.

- համակարգում ստեղծելու պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկը բնորոշող *ցուցիչներ*.
- յուրաքանչյուր սովորողի համար ինքնաշխատ ձևավորելու *պարտադիր կրթությունից դուրս մնալու համաթիվը*՝ հիմնվելով վերոնշյալ ցուցիչների վրա.
- պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող յուրաքանչյուր սովորողի համար ինքնաշխատ գեներացնելու *հաշվետվություններ,* որոնք ամփոփում են պարտադիր կրթությունից դուրս մնալու մանրամասները, ներառյալ՝ համաթիվը:

Աղբյուր՝ Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 114:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

44. 2024թ. ընթացքում, Ենթահամակարգում արձանագրվել է պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվելու 1665 դեպք, որից 13.02.2025թ. դրությամբ ընթացիկ դեպքերի թիվը եղել է 593 և վերաբերել 313 սովորողի[17]:

45. Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի ցուցիչների կազմը համապարփակ չէ: Գործող համակարգում ռիսկի գնահատումը հիմնվում է բացակայությունների վրա: Մասնավորապես, ռիսկի գոտում հայտնվելու հիմնական ցուցիչը մեկ ամսվա ընթացքում 6 աշխատանքային օր անընդմեջ չհաճախելն է: Որպես կանոն, տևական բացակայությունների առաջացումը պարտադիր կրթությունից դուրս մնալու սկզբնապատճառ չէ, այլ ինքնին հետևանք ռիսկի այլ գործոնների: Արդյունավետ մոնիթորինգի համակարգը ենթադրում է ռիսկի համապարփակ ցուցիչների սահմանում և դրանց գծով տվյալների ամփոփում միասնական շտեմարանում՝ յուրաքանչյուր երեխայի վերաբերյալ: Միջազգային փորձում ընդունված, ցուցիչների օրինակելի կազմն ամփոփված է Ներդիր 2-ում:

46. Գործող սահմանումների պայմաններում, սովորողը կարող է համարվել պարտադիր կրթությունից դուրս մնացած՝ առանց պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում հայտնվելու: Օրինակ, ամսվա ընթացքում 5 անընդմեջ բացակա, 1 հաճախում և նորից 5 բացակա և 1 հաճախում համակարգում գրանցվելու դեպքում սովորողը կունենա 10 բացակա, բայց ոչ՝ անընդմեջ 6 բացակա՝ հայտնվելով պարտադիր կրթությունից դուրս կարգավիճակում՝ առանց նախապես ռիսկի գոտում հայտնվելու:

[17] Ենթահամակարգում միևնույն սովորողի համար կարող է բացվել 1-ից ավելի հայտ:

Ներդիր 2.

Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գնահատման ցուցիչներ

Համապարփակ ցուցչակազմի օգտակարությունը պայմանավորված է նրանով, որ տվյալ ցուցիչները հանդիսանում են դիտարկելի վարքագծեր, որոնք ունեն ուժեղ կապ պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ: Այդ տվյալներից շատերն արդեն իսկ առկա են ԿԿՏՀ-ում (օրինակ՝ գնահատականները) և/կամ հայտնի են դպրոցներին: Միևնույն ժամանակ, ցուցիչները թույլ են տալիս ոչ միայն ախտորոշել առկա վիճակը, այլև դրանց դինամիկայի հիման վրա գնահատել ռիսկի գործոնների կառավարմանն ուղղված միջոցառումների ազդեցությունը ժամանակի ընթացքում:

Այդ ռիսկի գործոնների մոնիթորինգը թույլ կտա ոչ թե գործել այն փուլում, երբ ի հայտ են գալիս քրոնիկ բացակայությունները և երեխան դուրս է մնում, այլ ավելի վաղ՝ կանխարգելիչ միջոցառումներով նվազեցնելով դուրս մնալու հավանականությունը: Ըստ այդմ, կանխարգելիչ վաղ ահազանգման համակարգն ավելի ծախսարդյունավետ և նպատակային արդյունավետ է, քան պարտադիր կրթությունից դուրս մնալուց հետո միջոցառումների իրականացումը: Համապարփակ ցուցիչների հիման վրա ձևավորված տվյալների շտեմարանը թույլ կտա նաև վեր հանել ՊԿԴՄԵ-ների բնութագրերը և դուրս մնալու պատճառները:

Նշված տվյալների շտեմարանը կարող է նաև նպաստել պետական այլ գործառույթների արդյունավետության աճին: Մասնավորապես, հաշվի առնելով, որ բացահայտվում են առավել խոցելի երեխաները, նշված տվյալները կարող են օգտակար լինել սոցիալական քաղաքականության միջոցառումների ընթացքում կամ արտակարգ իրավիճակներում (աղետների ժամանակ) նշված երեխաներին թիրախային օգնություն ցուցաբերելու համար և այլն:

Առաջադիմություն

- Ցածր առաջադիմություն (օրինակ՝ որոշակի շեմից ցածր միջին տարեկան գնահատական, առնվազն 1-3 անբավարար գնահատական, ավարտական ու միասնական քննությունների գնահատականներ):

Վարք

- Դպրոցական կյանքին ցածր ներգրավվածություն (օրինակ՝ ուշադրության և կենտրոնացման ցածր մակարդակ, տնային աշխատանքների չիրականացում, արտադասարանային աշխատանքներին չմասնակցել, սոցիալական մեկուսացվածություն և այլն):
- Վարքականոնների խախտումներ (օրինակ՝ հակասոցիալական վարքագիծ, բուլինգ, բռնություն, գողություն, թմրամիջոցների օգտագործում, օրինախախտումներ):

Քրոնիկ բացակայություն

- Հաճախակի բացակայություն – ընթացիկ ուսումնական տարում օրերի 10-20%-ի բացակայություն:
- Խորը բացակայություն – ընթացիկ ուսումնական տարվա օրերի 20%-ից ավելի բացակայություն:

Հաշմանդամություն

- Ցուցիչներ՝ կախված դասերին մասնակցելու և սովորելու դժվարության մակարդակից:

Կրթական համակարգ մուտք և առաջընթաց

- Առնվազն 2 տարով մեծ է իր դասարանի համար սպասվող տարիքից, բայց երկտարեցի չէ:
- Նախկինում պարտադիր կրթությունից դուրս է մնացել, բայց վերադարձել է դպրոց:
- Նախադպրոցական հաստատություն չի հաճախել (տարրական դպրոցի սովորողների համար):
- Երկտարեցի է:

Վաղ պատանեկան պարտականություններ

- Մանկական աշխատանք, այդ թվում՝ տնային տնտեսությունում (օրինակ՝ գյուղատնտեսական աշխատանքներ):
- Հաշմանդամություն ունեցող կամ տարիքով իրենից փոքր ընտանիքի անդամի խնամք:
- Վաղ ամուսնություն, հղիություն, երեխայի առկայություն:

Ընտանեկան հանգամանքներ և դասընկերներ

- Դպրոցից հեռավորություն, հանրային տրանսպորտի ոչ մատչելիություն, ենթակառուցվածքների որակ:
- Կենսապայմաններ (աղքատություն / անապահովության նպաստառու ընտանիք, անօթևանություն, մանկատանը ապրել, ՔԿՀ-ում նախկինում գտնվել):
- Աղետների ազդեցություն, փախստական, տեղահանված անձ:
- Ընտանիքի անդամների մեծ թիվ:
- Պարտադիր կրթությունից դուրս մնացած քույր/եղբայր:
- Ընտանեկան պրոբլեմներ (ծնողների միջև կոնֆլիկտներ, ամուսնալուծություն, ընտանիքի անդամների կողմից թմրամիջոցների ու ալկոհոլի օգտագործում, բռնություն):
- Մոր կրթական վերին ցենզը[18]:
- Պետական լեզվին տիրապետելու դժվարություններ (օրինակ՝ ազգային փոքրամասնություններ, այլ երկրներից ներգաղթածներ):
- Ծնողների ցածր ներգրավվածություն դպրոցական կյանքին, երեխայի նկատմամբ ուշադրության և մասնավորապես նաև՝ զարգացման տեսակետից առաջնահերթություն համարվող կրթության նկատմամբ վերաբերմունքի անբավարար մակարդակ (օրինակ՝ ծնողական ժողովներին չհաճախում, ուսուցիչների հետ հանդիպումներից հրաժարում):
- Ճնշումներ դասարանցիների կողմից:

Ամենանշանակալի կապը պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի հետ ունեն առաջին երեք խումբ ցուցիչները:

Աղբյուր՝ *Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 29, Improving Education Participation. Policy and Practice Pointers for Enrolling All Children and Adolescents in School and Preventing Dropout. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 2, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2017, էջ 13-14:*

47. Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի բաղադրյալ ցուցիչ (համաթիվ) չի ձևավորվում սովորողների համար:

[18] ՀՀ-ում վերարտադրողական տարիքի (15-49 տարեկան) 2153 կին չունի տարրական կրթություն, ևս 7131 կին ունի միայն տարրական կրթություն: Աղբյուր՝ ՀՀ 2022թ.մարդահամարի արդյունքներ, ՎԿ, 2023:

Ներդիր 3.

Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գնահատման բաղադրյալ ցուցչի (համաթվի) կառուցում

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ռիսկի մի քանի գործոններին հակվածությունը մեծացնում է պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկը: Ըստ այդմ, ռիսկի ցուցիչների ագրեգացմամբ կարելի է ստանալ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի ավելի ճշգրիտ պատկեր: ԿԿՏՀ-ն կարող է ընձեռել հնարավորություն՝ գեներացնելու սովորողների ռիսկի ամփոփ հաշվետվություն, որի պայմանական օրինակը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Սովորողի անուն ազգանուն	Դասարան	Առաջադիմություն	Վարք	Քրոնիկ բացակայություններ	Հաշմանդամություն	Մուտք և առաջընթաց	Ընդամենը
Սովորող Ա	IV	2	1	1		1	5
Սովորող Բ	V				2		2
Սովորող Գ	VI			1	1	1	3

Յուրաքանչյուր ցուցչին տրվող գնահատականների պայմանական օրինակները ներկայացվում են ստորև.

Առաջադիմություն

- 1 միավոր – առնվազն 1 անբավարար գնահատական և/կամ միջին գնահատականը ցածր է որոշակի սահմանված շեմից:
- 2 միավոր – առնվազն 3 անբավարար գնահատական և/կամ միջին գնահատականը ցածր է որոշակի սահմանված շեմից:

Վարք

- 1 միավոր - Դպրոցական կյանքին ցածր ներգրավվածություն (օրինակ՝ ուշադրության և կենտրոնացման ցածր մակարդակ, տնային աշխատանքների չիրականացում, արտադասարանային աշխատանքներին չմասնակցել, սոցիալական մեկուսացվածություն և այլն):
- 2 միավոր - Վարքականոնների խախտումներ (օրինակ՝ հակասոցիալական վարքագիծ, բուլինգ, բռնություն, գողություն, թմրամիջոցների օգտագործում, օրինախախտումներ):

Քրոնիկ բացակայություն

- 1 միավոր - Հաճախակի բացակայություն – ընթացիկ ուսումնական տարում օրերի 10-20%-ի բացակայություն:
- 2 միավոր - Խորը բացակայություն – ընթացիկ ուսումնական տարվա օրերի 20%-ից ավել բացակայություն:

Սահմանափակումներ

- 1 միավոր – ունի որոշ դժվարություններ դասին մասնակցելու և սովորելու հարցում:
- 2 միավոր – ունի էական դժվարություններ դասին մասնակցելու և սովորելու հարցում:

Մուտք և առաջընթաց

- 1 միավոր – երկտարեցի է (եղել է):
- 1 միավոր – նախադպրոցական կրթության բացակայություն:

- 1 միավոր – նախկինում հանդիսացել է պարտադիր կրթությունից դուրս մնացած:
- 2 միավոր – տեղի ունի վերը նշվածներից առնվազն երկուսը:

Ռիսկի ագրեգացված գնահատականը թույլ կտա սահմանափակ հնարավորությունների դեպքում սահմանել առաջնահերթություններ՝ նախապատվությունը տալով ավելի բարձր ռիսկային դեպքերի կառավարմանը:

Բացի սովորողի մակարդակում ռիսկի գնահատումից, հնարավոր է նաև ստանալ ռիսկայնության հաշվետվություններ դպրոցի կամ համայնքի մակարդակում:

Աղբյուր՝ *Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 65-67.*

48. Բացակայության պատճառները ԿԿՏՀ-ում չեն հաշվառվում: Մանրամասն տեղեկատվության առկայությունը, թե ինչու են երեխաները բացակայում, թույլ կտա ավելի լավ պատկերացում կազմել, թե ինչու են երեխաները հայտնվում պարտադիր կրթությունից դուրս գտնվելու ռիսկի գոտում և վաղ ահազանգմամբ, կարիքները հասցեագրող կանխարգելիչ գործողություններ պլանավորել ու իրականացնել:

Ներդիր 4. Բացակայությունների մոնիթորինգ դպրոցների կողմից

Բացակայությունների վերաբերյալ ուսուցիչների կողմից տեղեկատվության ստացման հարցում օգտակար է սովորողի բացակայությունների ստանդարտացված ձևանմուշի (գրավոր բացատրագրի ձևանմուշի) սահմանված լինելը, որը կլրացվի սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) կողմից՝ ներառելով բացակայության պատճառների ստանդարտացված ցանկ և առանձին «Այլ պատճառներ» տող՝ լրացման հնարավորությամբ:

Միջազգային պրակտիկայում կիրառվող՝ սովորողի բացակայության պատճառների ստանդարտացված ցանկի օրինակը, որը մեկ կամ մի քանի պատճառների ընտրության հնարավորությամբ ենթակա է լրացման ուսուցչի կողմից, ներկայացված է ստորև.

- հիվանդություն կամ անխուսափելի բժշկական/ստոմատոլոգիական կոնսուլտացիա.
- կրոնական արարողություն.
- էական/հրատապ ընտանեկան դրություն.
- ժամանակավոր հեռացում՝ դպրոցական կարգապահության խախտման պատճառով.
- բնական աղետների կամ վտանգավոր եղանակային պայմանների ազդեցություն.
- ֆիզիկական, ճանաչողական, էմոցիոնալ կամ այլ սահմանափակում / հաշմանդամություն, որը պարտադիր կրթությունում ներգրավվածությունը դարձրել է շատ բարդ.
- համադասարանցիների համեմատ ցածր առաջադիմություն.
- համադասարանցիների ազդեցություն, ինչպես օրինակ՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած / դպրոց չհաճախող ընկերներ.
- կրթությանն առնչվող ծախսերի իրականացման անհնարինություն.
- ամուսնություն.

- բուլինգ.
- աշխատանք (ինչպես ֆորմալ, այնպես էլ՝ ոչ ֆորմալ, վճարովի կամ չվճարվող).
- սովորողի մոտ կրթության հանդեպ հետաքրքրության պակաս.
- սովորողի ընտանիքի մոտ երեխայի կրթության հանդեպ հետաքրքրության պակաս.
- ընտանիքում պրոբլեմների առկայություն, ինչպես օրինակ՝ բռնություն կամ թմրամիջոցների օգտագործում / ալկոհոլի չարաշահում.
- պատճառը չի բացահայտվել: Այս դեպքում անհրաժեշտ է կատարել տեքստային նշումներ:

Միջազգային փորձը նախատեսում է նաև հստակ գործելակարգերի առկայություն, որոնք թույլ կտան մշտադիտարկել բոլոր աշակերտների ամենօրյա հաճախումները՝ խուսափելու համար երկար բացակայությունների կուտակումներից կամ այլ կերպ ասած՝ կանխարգելելու համար կրթությունից դուրս մնալը կամ դուրս մնալու ռիսկի գոտում հայտնվելը: Օրինակ, եթե սովորողը կուտակում է 3 անհարգելի բացակայություն, համակարգը ստեղծում է հայտ, որը հասցեագրվում է դասղեկին, ով պետք է կապվի երեխայի ծնողների հետ՝ իրավիճակը հասկանալու և հանգուցալուծելու նպատակով:

Դեպք	Սցենար	Դեպքը հանձնարարվում է
Դեպք 1	1 անհարգելի բացակայություն	Ուսուցիչ
Դեպք 2	3 հարգելի բացակայություն	Ուսուցիչ
Դեպք 3	3 անհարգելի բացակայություն	Դասղեկ
Դեպք 4	5 հարգելի բացակայություն	Դասղեկ
Դեպք 5	5 անհարգելի բացակայություն	Փոխտնօրեն/Տնօրեն
Դեպք 6	7 հարգելի բացակայություն	Փոխտնօրեն/Տնօրեն
Դեպք 7	10 անհարգելի բացակայություն	Կրթության նախարարություն
Դեպք 8	10 հարգելի բացակայություն	Կրթության նախարարություն

Աղբյուր՝ *Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 63, Global Out-of-School Children Initiative, Operational Manual, 2015, UNICEF, էջ 83:*

49. Պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց՝ կրթությունից դուրս մնալու պատճառները դեպք առ դեպք մոտեցմամբ ԿԿՏՀ-ի Ենթահամակարգում բացահայտված չեն: Պատճառների բացակայության պայմաններում չի իրականացվել պարտադիր կրթությունից դուրս մնալու պատճառների կանոնակարգված վերլուծություն:

50. Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող անձանց՝ ռիսկը պայմանավորող պատճառների ստանդարտացված ցանկը ԿԿՏՀ-ի Ենթահամակարգում բացահայտված է, սակայն սահմանափակ ներուժ ունի արդյունավետ արձագանքող միջոցառումների պլանավորման տեսանկյունից: Պատճառների ցանկը համապարփակ չէ (Աղյուսակ 2): Ընդ որում, պատճառների շարքում ընդգրկված է «Բացակայություններ»-ը: Հաշվի առնելով, որ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող սովորողները հատկորոշվել են հենց բացակայությունների հիման վրա, որպես վերջիններիս բացատրող գործոն «Բացակայություններ»-ը դիտարկվել չեն կարող: Հատկանշական է, որ դեպքերի շուրջ 60%-ում, համակարգից օգտվողները որպես պատճառ են նշել «Բացակայություններ»-ը, իսկ շուրջ 6% դեպքերում պատճառը չի նշվել: Այլ կերպ ասած, չնայած համակարգի ընձեռած հնարավորությանը, դեպքերի շուրջ 2/3-ի պարագայում ինքնաշխատ եղանակով պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի պատճառները հնարավոր չի եղել բացահայտել:

Աղյուսակ 2. **Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվելու պատճառները**

Պատճառը	Երեխաների թիվը
Այլ երկիր է մեկնել դպրոցից	7
Առողջական (հիվանդություն կամ երկարաժամկետ բուժման խնդիր)	7
Բացակայել է Հայաստանի Հանրապետությունից	13
Բացակայություններ	197
Երեխայի ցանկություն (երեխան իր կամքով հրաժարվում է մասնակցել կրթական գործընթացին)	50
Ընտանեկան բռնություն (կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա կամ երեխայի ընտանիք կամ հարկադիր աշխատանք)	1
ԿԱՊԿՈՒ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու խնդրով պայմանավորված)	7
Սոցիալական (ընտանիքի սոցիալական անապահովության խնդիր)	15
Պատճառը նշված չէ	16
Ընդամենը	**313**

Աղբյուր՝ ԿԿՏՀ-ի «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգ, 13.02.2025թ. դրությամբ:

51. Բացակայությունների լիարժեք հաշվառման ռիսկերի կառավարում: Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գնահատման գործող համակարգը հիմնվում է բացակայությունների թվի վրա: Ըստ այդմ, համակարգը թույլ կտա հատկորոշել իրական ռիսկն այն դեպում, եթե բացակայությունների հաշվառումն արտացոլի իրական պատկերը: Գործող կարգավորումների համաձայն, սովորողների տվյալ օրվա հաճախումների արձանագրումն իրականացվում է ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանում՝ *երեք աշխատանքային օրվա ընթացքում*[19]: Ժամանակային լագի առկայությունը մեծացնում է հաճախումների լիարժեք հաշվառման ռիսկը: Կրթական հաստատությունների տեխնիկական հագեցվածությունից կախված, հաճախումների դիֆերենցված հաշվառման պահանջը (այն դեպքերում, երբ տեխնիկական կարողությունները բավարար են, *իրական ժամանակում* հաշվառման պահանջ սահմանելով) կարող է նպաստել նշված ռիսկի նվազեցմանը:

52. Կարգավորումներից հստակ չէ հաճախումների հաշվառման եղանակը (միայն բացակայությունների հաշվառում՝ համապատասխան գրառմամբ, թե՞ նաև ներկա լինելու վերաբերյալ գրառման կատարում):

53. Ուսումնական հաստատության գործունեության արտաքին գնահատման չափանիշները[20] չեն պարունակում պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի կառավարման՝ ուսումնական հաստատության կարողությունները և գնահատումն ընդգրկող ժամանակահատվածում կառավարման որակը (այդ թվում՝ տվյալների որակի համար հաշվետվողականությունը) գնահատող բացահայտ, հաստատությանը վերաբերելի և չափելի չափանիշներ:

54. Հաճախումների հաշվառման արժանահավատությունը խթանող՝ միջազգային փորձից բխող դրական գործելակերպերն ամփոփված են Ներդիր 5-ում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

55. Հաշվեքննության տվյալ արդյունքին վերաբերող առաջարկությունները ներկայացված են 81-րդ կետում (Առաջարկություններ N 2.4, 2.5, 2.6):

[19] Էլեկտրոնային դասամատյանի վարման վերահսկողությունն իրականացնում են ԿԳՄՄՆ-ն, կրթության տեսչական մարմինը, լիազոր մարմինը, դպրոցի տնօրենը: Աղբյուր՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի հավելված 2-ի 1.1 կետի 7-րդ ենթակետ:

[20] ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշման հավելվածի 29-րդ կետ:

Ներդիր 5. Հաճախումների հաշվառման արժանահավատությունը խթանող դրական գործելակերպեր

- **Չպատժել բացակայությունների հաշվառումը, ըստ այդմ՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու (ռիսկի) իրական պատկերի հաղորդումը.** Նման գործողությունները կարող են խթանել հիմնախնդրի քողարկումը (օրինակ՝ բացակայությունների չնշանակման կամ պատճառների խեղաթյուրման ճանապարհով): Անհրաժեշտ է, որ դպրոցները «չվախենան» բացակայությունների իրական պատկերը հաղորդելուց, տվյալ պատկերի համար «մեղադրվելուց»: Փոխարենը, դպրոցները պետք է վստահ լինեն, որ իրական պատկերը ներկայացնելու և սովորողների՝ կրթությունից դուրս մնալու բարձր ցուցանիշների առկայության դեպքում նրանց կցուցաբերվի անհրաժեշտ աջակցություն հանրային կառավարման համապատասխան մարմինների կողմից, այդ թվում՝ հաշվի առնելով, որ պարտադիր կրթությունից դուրս մնալու շատ պատճառներ ուղղակիորեն կապված չեն դպրոցների և կրթական անձնակազմի հետ: Կրթությունից սովորողի դուրս մնալը կարող է լինել դպրոցներին անհրաժեշտ աջակցություն չցուցաբերելու արդյունք: Կարևոր է, որ դպրոցները չընկալեն, որ տեղեկատվական հոսքերն ունեն միակողմանի բնույթ, այսինքն՝ նրանք միայն հաղորդում են տվյալներ և դրան չի հաջորդում հետադարձ կապ:
- **Ապախթանել բացակայությունների չհաշվառումը, ըստ այդմ՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու (ռիսկի) իրական պատկերի չհաղորդումը.** հնարավոր միջոցառումներից են դպրոցների գնահատման (վարկանշավորման) համակարգում դպրոցների վարկանիշը ձևավորող գործոնների շարքում պարտադիր կրթությունից դուրս մնալու (ռիսկի) հաշվի առնելը (մասնավորապես՝ «Տվյալների որակը» դիտարկելով որպես դպրոցի հաշվետվողականության գնահատականի առանցքային բաղադրիչ), վարկանշային գնահատումից կախված տեսչական ստուգումների պլանավորումը:
- **Տվյալները գրանցել այնպես, որ բարդ լինի պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին թաքցնելը.** կարևոր է, որ ուսուցիչները հաշվառեն ոչ միայն բացակայությունները, այլև ներկայությունները: Բացի այդ, էլեկտրոնային գրանցամատյանում հաշվառվում են ոչ միայն հաճախումները, այլև սովորողին վերաբերելի այլ տվյալներ, ինչպես օրինակ՝ առաջադրանքների և քննությունների գնահատականները, անհատական օրագիրը և այլն: Ավելի բարդ է խեղաթյուրել հաճախումների վերաբերյալ տեղեկատվությունը, եթե միաժամանակ պետք է խեղաթյուրվեն նաև գնահատականների վերաբերյալ գրառումները:
- **Դպրոցների կանոնավոր ստուգումներ[21] (առանց նախապես ծանուցման)**, որոնց ընթացքում կհամադրվեն հաճախումների արձանագրումներն իրական հաճախումների հետ:
- **Հեռախոսների հիման վրա հաճախումների թվային մոնիթորինգ.** ՅՈՒՆԻՍԵՖ-ի մասնակցությամբ մշակված է համակարգ (EduTrac), որը կիրառվում է մի շարք երկրներում, այդ թվում՝ Հնդկաստանի 15000 դպրոցներում՝ իրական ժամանակում ստանալով տեղեկատվություն սովորողի հաճախման վերաբերյալ՝ սովորողի հեռախոսին ուղարկված հաղորդագրությանը ստացված պատասխանի միջոցով:

Աղբյուր՝ *Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 31-33:*

[21] Ստուգումները կարող են համադրվել ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների հետ, օրինակ՝ հեռախոսների գեոլոկացիայի նույնականացման:

Ուղղորդման միջոցառումները թույլ չեն տվել հասնել սահմանված թիրախներին

ԻՆՉՈ՞Ի Է ՏՎՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐ

56. Արդյունավետ ուղղորդման գործընթացը տարբեր շահագրգիռ և պատասխանատու մարմինների աշխատանքների համադրմամբ ՊԿԴՄԵ-ների կամ ռիսկի գոտում հայտնված երեխաների անհատական դեպքերի արդյունավետ կառավարման և կրթության մեջ ներառման անհրաժեշտ նախադրյալ է:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

57. Հաշվեքննության տվյալ արդյունքը պայմանավորող հիմնական պատճառներն են.

- ԽՀՄ-ների սահմանափակ կարողությունները.
- ԽՀՄ-ների և այլ շահագրգիռ ու պատասխանատու մարմինների կողմից էլեկտրոնային կառավարման համակարգի ներուժի չօգտագործումը.
- տվյալ բնագավառում հանրային կառավարման գործառույթները կոորդինացնող միջգերատեսչական իրավական մեխանիզմի բացակայությունը (օրինակ՝ Կառավարության կողմից ձևավորված միջգերատեսչական հանձնաժողով).
- թույլ հանրային հաշվետվողականությունը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

58. Պետք է գործարկել պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկերի կանխարգելման, դուրս մնացած երեխաների հայտնաբերման և կրթական համակարգում նրանց ներառման արդյունավետ մեխանիզմներ:

Աղբյուր՝ «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքի 1-ին հոդվածով հաստատված հավելվածի 81-րդ կետի 3-րդ ենթակետի «գ» պարբերություն:

59. Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից:

Աղբյուր՝ «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքի 1-ին հոդվածով հաստատված հավելվածի 86-րդ կետի 7-րդ ենթակետ, Կառավարության 16.03.2023թ. թիվ 351-Լ որոշմամբ հաստատված «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի 2-րդ նպատակ:

60. Որպես «ՊԿԴՄԵ-ների՝ կրթության համակարգում արդյունավետ ընդգրկման գործիքակազմի ներդրման» գործողությունից ակնկալվող արդյունք է սահմանվել հայտնաբերված և ուղղորդված երեխաների մասնաբաժինը ՊԿԴՄԵ-ների կազմում հասցնելը՝

- 2023թ. - 50%,
- 2024թ. - 70%,
- 2026թ. - 90%,
- 2030թ. - 100%:

Աղբյուր՝ Կառավարության 16.03.2023թ. թիվ 351-Լ որոշմամբ հաստատված «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի «Հանրակրթություն» բաժնի նպատակ 2-ի 2.1.1 կետ:

61. Որպես Համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություն է սահմանված դպրոցական տարիքի երեխաների հաշվառման իրականացումը և ուսումնական հաստատություններում ընդգրկման *ապահովումը*:

Աղբյուր՝ ԿՄՕ, հոդվ. 39, մաս 1, կետ 2:

62. Մարզպետը (Երևան քաղաքում՝ քաղաքապետը) *համակարգում և վերահսկում է* դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություն:

Աղբյուր՝ ԿՄՕ, հոդվ. 39, մաս 2, ՀՄՕ, հոդվ. 31, մաս 1, կետ 3:

63. Քաղաքականություններն ու ծրագրերը պետք է հիմնված լինեն գերատեսչությունների, ինչպես նաև հանրային կառավարման բոլոր մակարդակների միջև արդյունավետ համագործակցության, յուրաքանչյուր մասնակցի պարտականությունների հստակ սահմանված լինելու վրա:

Աղբյուր՝ Improving Education Participation. Policy and Practice Pointers for Enrolling All Children and Adolescents in School and Preventing Dropout. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 2, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2017, էջ 19:

64. Պետք է առկա լինի միջգերատեսչական կոորդինացնող մարմին, որը կներառի բոլոր վերաբերելի շահագրգիռ կողմերին տեղական, մարզային և ազգային մակարդակներից՝ բոլոր ոլորտներից, մոնիթորինգի կենթարկի իրականացվող միջոցառումների ընթացքը:

Աղբյուր՝ Improving Education Participation. Policy and Practice Pointers for Enrolling All Children and Adolescents in School and Preventing Dropout. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 2, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2017, էջ 22-23:

ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

65. Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման գործընթացներում շահագրգիռ և պատասխանատու կառույցներն են՝

- ԽՀՄ-ն՝ ի դեմս համայնքի ղեկավարի.
- աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը.
- կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը.
- կրթության տեսչական մարմինը.
- ՀՀ մարզպետների աշխատակազմերը.
- Միասնական սոցիալական ծառայությունը.
- ՀՀ ոստիկանությունը (ՆԳՆ-ն):

Աղբյուր՝ Կարգի 6-րդ կետ:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

66. 2024թ. ԽՀՄ-ների կողմից հայտնաբերվել և կրթությանն է ներգրավվել պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց[22] 1%-ը: ԽՀՄ-ների կողմից հայտնաբերվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած ընդամենը 695 անձ, որոնցից կրթությանը ներգրավվել է ընդամենը 202-ը կամ ԽՀՄ-ների կողմից հայտնաբերվածի 29%-ը (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. **ԽՀՄ-ների կողմից պարտադիր կրթությանը ներգրավված անձանց թիվը**

Հ/Հ	Մարզի (Երևան) անվանումը	ԽՀՄ-ների կողմից հայտնաբերված ՊԿԴՄԵ-ների թիվը, որից՝	Կրթության մեջ ներգրավված անձանց թիվը	Տես. կշիռը հայտնաբերվածների կազմում	Տես. կշիռը ՊԿԴՄԵ-ների կազմում
1	Երևան	26	15	57.7%	0.2%
2	Արագածոտն	42	7	16.7%	1.0%
3	Արարատ	170	70	41.2%	5.2%
4	Արմավիր	9	0	0.0%	0.0%
5	Գեղարքունիք	25	0	0.0%	0.0%
6	Լոռի	50	0	0.0%	0.0%
7	Կոտայք	237	77	32.5%	6.3%
8	Շիրակ	7	3	42.9%	0.2%
9	Սյունիք	105	16	15.2%	3.1%
10	Վայոց ձոր	9	8	88.9%	3.4%
11	Տավուշ	15	6	40.0%	1.6%
	Ընդամենը	**695**	**202**	**29.1%**	**1.0%**

Աղբյուր՝ *Մարզպետարանների կողմից ԿԳՄՄՆ-ին 2024թ. նոյեմբեր ամսին ներկայացված հաշվետվություններ:*

[22] ՊԿԴՄԵ-ների թիվը ներկայացված է 29-րդ կետում:

Անհատական դեպքերի էլեկտրոնային կառավարում

67. ԿԳՄՄՆ-ն ձևավորել է էլեկտրոնային կառավարման ենթահամակարգ, որին հասանելիություն է տրամադրված ԽՀՄ-ներին: Վերջիններիս վերապահված է դպրոցական տարիքի երեխաներին ուսումնական հաստատություն ընդգրկումն ապահովելու պարտականությունը: Մինչդեռ, 2024թ. ընթացքում էլեկտրոնային կառավարման համակարգում ԽՀՄ-ների կողմից.

- պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների մասով անհատական դեպքի վարում գործնականում չի իրականացվել[23].
- ռիսկի գոտում գտնվող անձանց մասով, Ենթահամակարգում առնվազը 1 գործողություն իրականացվել է միայն 4.5% դեպքերում (Աղյուսակ 4): Օրինակ, Արարատի մարզում, ուր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող երեխաների դեպքերի թիվն առավելագույնն է եղել, ԽՀՄ-ների կողմից էլ. համակարգում կատարված է 0 գործողություն:

68. Վերոնշյալը հետևանք է նաև ԽՀՄ-ների կողմից՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ընդգրկելուն ուղղված աշխատանքների հանդեպ տարածքային կառավարման մարմինների (մարզպետարանների, իսկ մայրաքաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) թույլ հսկողության և համակարգման:

69. Այլ շահագրգիռ և պատասխանատու մարմինների կողմից (օրինակ՝ Ոստիկանություն[24], ՄՄԾ[25]) Ենթահամակարգում գրառումները գործնականում նույնպես բացակայում են:

70. Արդյունքում, պատասխանատու մարմինների կողմից, էլեկտրոնային կառավարման ենթահամակարգի միջոցով, անհատական դեպքի համատեղ կառավարման գործընթացը եղել է անարդյունավետ՝ սահմանափակելով կրթությունից դուրս մնացած անձանց՝ կրթական համակարգ ներգրավելու և ռիսկերը ժամանակին կառավարելու հնարավորությունը:

---

[23] Ենթահամակարգում «Ամսաթիվ», «Օգտագործող», «Մեկնաբանություն», «Պատճառ», «Կցված ֆայլ» բաժինները գործնականում դատարկ են:

[24] Ըստ ՆԳՆ-ի, ԽՀՄ-ների կողմից Ոստիկանությանը ոչ մի հայտ չի ներկայացվել:

[25] Կարգի համաձայն, երբ պարզվում է, որ անձի բացակայությունների պատճառը սոցիալական կարիքներով է պայմանավորված, ԽՀՄ-ն հայտ է ուղարկում ՄՄԾ-ին՝ անձի սոցիալական կարիքները հոգալու համար: Ըստ ԱՍՀՆ-ի, 2021-2024թթ. ՄՄԾ-ն ԽՀՄ-ներից ստացել է ընդամենը 240 հայտ: Պարտադիր կրթությանը վերադարձել է ընդամենը 75 անձ կամ ներկայացված հայտերի 31% դեպքում:

Աղյուսակ 4. **ԽՀՄ-ների գործողությունները էլեկտրոնային կառավարման համակարգում**

Մարզ / ք.Երևան	Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող սովորողների ընթացիկ դեպքեր	Դեպքերի թիվը, երբ ԽՀՄ-ն 2024թ. իրականացրել է առնվազն մեկ գործողություն
Արարատի մարզ	140	0
ք. Երևան	138	6
Կոտայքի մարզ	93	11
Շիրակի մարզ	76	0
Արմավիրի մարզ	72	0
Արագածոտնի մարզ	24	0
Լոռու մարզ	22	2
Սյունիքի մարզ	14	8
Տավուշի մարզ	8	0
Գեղարքունիքի մարզ	6	0
Վայոց ձորի մարզ	-	-
Ընդամենը	**593**	**27**

2024թ. ընթացքում ստեղծված հայտերի շրջանակում 2024թ. ընթացքում ԽՀՄ-ների կողմից Ենթահամակարգում արձանագրված գործողությունները:

Աղբյուր՝ *Ենթահամակարգ, 12.02.2025թ. դրությամբ:*

ԽՀՄ-ների կարողությունների սահմանափակումներ

71. ԽՀՄ-ներին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ[26], որոնք գործում են հասարակական հիմունքներով: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի[27]) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, տարածքային կենտրոնների աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, Ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

[26] ԽՀՄ-ների կանոնադրության 11-րդ կետ:

[27] Երևանում ԽՀՄ-ին վերապահված լիազորությունները քաղաքապետի անունից իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները:

72. ԽՀՀ-ներում ընդգրկված անձինք կարող են չունենալ համապատասխան գիտելիքներ և հմտություններ պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց կրթական համակարգ վերադարձնելու (ընդգրկելու) համար: Երևան քաղաքում և մարզերում ԽՀՀ-ների անդամների համար գրեթե չեն կազմակերպվում և իրականացվում վերապատրաստումներ, որոնք ուղղված կլինեն երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում տվյալ մարմինների կարողությունների զարգացմանը և նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը[28]:

73. Մշակված չեն ուղեցույցներ, որոնք թույլ կտային ԽՀՄ-ներին, դպրոցներին և այլ շահագրգիռ կողմերին, կախված դեպքի առանձնահատկությունից, ապահովել դեպքի արդյունավետ կառավարում:

Պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնական հանգուցակետերը

74. Պարտադիր կրթությունից դուրս մնալու երկու հիմնական օղակներն են՝ առաջին դասարան ժամանակին չընդունվելը և միջին դպրոցից ավագ դպրոցին անցումը: Ըստ այդմ, նշված երկու ուղղություններով կարող են պլանավորվել և իրականացվել ընդհանուր միջոցառումներից տարանջատվող հասցեական ուղղորդման միջոցառումներ:

75. Մինչև 2024թ. սեպտեմբերի 5-ը 6292 երեխա չի ընդունվել 1-ին դասարան: Համաձայն բնակչության պետական ռեգիստրի տվյալների, 6 տարեկան երեխաների թիվը, որոնց 6 տարին լրացել է կամ լրանում է մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը, կազմել է 40279: Մինչև 2024թ. սեպտեմբերի 5-ը, նշված 40249 երեխաներից 1-ին դասարան ընդունվել է 33987-ը:

76. 2024թ. սեպտեմբերի 5-ից հետո՝ 1-ին դասարան են ընդունվել ևս 381 երեխա կամ ընդհանուր թվի 6.1%-ը: Այլ կերպ ասած, երբ արդեն կարող էր հայտնի լինել այն անձանց ցանկը, ովքեր պետք է հաճախեին առաջին դասարան, բայց ծնողները չեն դիմել դպրոց, շահագրգիռ և պատասխանատու մարմինների կողմից չեն իրականացվել արդյունավետ վաղ ահազանգման միջոցառումներ՝ երեխաների ժամանակին ներգրավումը պարտադիր կրթության մեջ ապահովելու համար: Հատկանշական է, որ կրթությանը սահմանված տարիքից ուշ ներգրավվելն ինքնին կրթությունից դուրս մնալու ռիսկի գործոն է:

77. Կրթական համակարգում ընդգրկված, այնուհետև պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների շուրջ 76%-ը կազմում են 9-րդ և 10-րդ դասարանցիները (Գծապատկեր 4): Ըստ այդմ, անհրաժեշտ են վաղ ահազանգման միջոցառումներ՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող անձանց (տվյալ դեպքում ռիսկ հասկացությունը դիտարկվում է լայն իմաստով՝ կարգով նախատեսված 6 անընդմեջ բացակայություններից բացի ռիսկի այլ ցուցիչների ագրեգացմամբ ձևավորվող համաթվի հիման վրա)՝ միջին դպրոցից ավագ դպրոցին արդյունավետ անցումն ապահովելու համար:

Կոորդինացում

78. Շահագրգիռ և պատասխանատու կառույցների աշխատանքները կոորդինացնող իրավական մեխանիզմ սահմանված չէ: Հաշվի առնելով, որ գործընթացին ներգրավված են մեծ թվով մարմիններ, որոնցից շատերը հանրային կառավարման համակարգում ունեն հորիզոնական տեղակայվածություն, պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների՝ կրթության մեջ ընդգրկվածության ապահովմանն ուղղված հանրային քաղաքականության միջոցառումների արդյունավետությունը ենթադրում է նշված միջոցառումների, այդ թվում՝ բացահայտման, մոնիթորինգի և ուղղորդման համակարգերի ինստիտուցիոնալ զարգացմանն ուղղված գործողությունների արդյունավետ համակարգում[29]:

Հաշվետվողականություն

79. ՊԿԴՄԵ-ների վերաբերյալ չի ապահովվում հաշվետվողականություն և թափանցիկություն: Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական հաշվետվությունների ձևերը[30] չեն ենթադրում ՊԿԴՄԵ-ների ընդհանուր թվի, ռիսկի գոտում գտնվող անձանց, ինչպես նաև նրանց բնութագրող ապաագրեգացված այլ տեղեկատվության (օրինակ՝ ըստ սեռատարիքային կազմի, պատճառների, մարզի, համայնքի վերաբերյալ) ներկայացում: Ըստ այդմ, նշված տվյալները տեղ չեն գտնում Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող վիճակագրական հաշվետվություններում[31]:

---

[28] «Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում համակարգային խնդիրների վերհանում և լուծումների առաջարկում» հետազոտություն, ՀՀ ՄԻՊ, 2022:

[29] Կոորդինացման վերաբերյալ տվյալ արձանագրումը վերաբերում է մակրոմենեջմենթին և չի վերաբերում անհատական դեպքերի վարմանը / կառավարմանը (միկրոմենեջմենթին), որը կարող է իրականացվել գործող ձևաչափերի շրջանակում:

[30] Հաստատված են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. օգոստոսի 13-ի թիվ 1030-Ն հրամանով:

[31] Մասնավորապես՝ ՀՀ սոցիալական վիճակի մասին ամենամյա հաշվետվություններում:

Ներդիր 6.

Պարտադիր կրթությունում ընդգրկվածությունը խթանող միջոցառումների՝ միջազգային փորձից բխող օրինակներ

Պայմանական դրամական փոխանցումներ (նպաստներ)

Սոցիալական աջակցության / պաշտպանության միջոցառումների համար որպես պայման է դիտարկվում երեխայի՝ պարտադիր կրթության մեջ ընդգրկվածությունը (օրինակ՝ Բուլղարիայում ամսական 5 անհարգելի բացակայության դեպքում տվյալ ամսվա նպաստի վճարումը կասեցվում է): Բացասական խթանից զատ գործում են նաև դրական խթաններ (չստացած նպաստը տրամադրվում է այն պահից, երբ երեխան սկսում է հաճախել դպրոց):

Հաջորդ դասարան տեղափոխվելու և կրթության շարունակականության ապահովման դեպքում տրամադրվում է մեկանգամյա նպաստ:

Ֆինանսական խթաններ

Նախորդ տարվա համեմատ կրթությունից դուրս մնալու մակարդակի նվազեցման հարցում կրթական հաստատությունների կատարողականի մոնիթորինգի հիման վրա, բարձր կատարողական ունեցող դպրոցները կարող են ստանալ հավելյալ ֆինանսավորում (Նիդեռլանդներ):

Ձեռնարկ դպրոցների համար

Թեև դպրոցներին կարող են լավ հայտնի լինել բացակայություններին արձագանքման տարբերակները, ինչպես օրինակ՝ կապ հաստատել ծնողների հետ, ոստիկանության հետ, կազմակերպել ուսուցչի կամ սոցիալական աշխատողի հանդիպում երեխայի ընտանիքի հետ, միշտ չէ, որ հստակ է, թե ո՞ր հանգամանքներում ի՞նչ մոտեցում կիրառել: Հստակ և մանրամասն ընթացակարգերի առկայությունը կարող է օգնել դպրոցներին իրականացնել արդյունավետ գործողություններ և արագ արձագանքել իրավիճակին: ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ առանձին երկրներում (օր.՝ Սերբիա, Կոսովո, Ղրղզստան) մշակվել են կրթությունից դուրս մնալու կանխարգելման և արձագանքման ձեռնարկներ դպրոցների համար, որոնք հասցեագրում են հետևյալ հարցերը.

- ՊԿԴՄԵ-ների բացահայտմանը աջակցում.
- դպրոց հաճախումների ու բացակայությունների կառավարման բարելավում.
- կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող երեխաների բացահայտում և նրանց համարժեք աջակցություն.
- ԿԿՏՀ-ում տվյալների ճշգրիտ մուտքագրման անհրաժեշտության վերաբերյալ տեղեկացվածության խրթանում.
- ուղեցույցներ ուսուցիչների համար, թե ինչպես համագործակցել ծնողների, սովորողների ու արտաքին գործընկերների / ծառայությունների հետ:

Ռազմավարություններ և ծրագրեր

Մի շարք երկրներում մշակվել են կրթությունից վաղ դուրս մնալու վերաբերյալ ռազմավարություններ և ծրագրեր ինչպես ազգային մակարդակում (Ավստրիա, Ռումինիա, Բուլղարիա), այնպես էլ՝ համայնքային մակարդակում (Իռլանդիա)՝ բոլոր դերակատարների ջանքերի միավորմամբ: Ֆրանսիայում կրթության նախարարության առաջնորդությամբ, ևս 8 նախարարությունների ներգրավմամբ, իրականացվում են կրթությունից վաղ դուրս մնալու դեմ ուղղված միջոցառումներ, 2-ամսյա պարբերականությամբ տեղի են ունենում հանդիպումներ այլ գերատեսչությունների ներգրավմամբ, ստեղծված են միջգերատեսչական աշխատանքային խմբեր, որոնք մշակում են գործիքներ, հավաքում դրական փորձը և կազմակերպում իրազեկման միջոցառումներ:

Կառուցվածքային միավորներ կրթության նախարարություններում

Կրթության նախարարություններում ստեղծվել են կառուցվածքային միավորներ, որոնք իրականացնում, համակարգում և մշտադիտարկում են կրթությունից վաղ դուրս մնալու կանխարգելմանն ուղղված քաղաքականությունները (Ավստրիա, Նիդեռլանդներ, Իսպանիա, Բուլղարիա, Մալթա):

Համաձայնագրեր

Կրթության նախարարության, համայնքապետարանի և դպրոցի միջև կնքվող երկարաժամկետ եռակողմ համաձայնագրեր, որոնք սահմանում են կրթությունից դուրս մնալու նվազեցման թիրախներ համայնքապետարանների և դպրոցների համար: Կրթության նախարարության առաջնորդությամբ ու աջակցությամբ, տեղական շահառուները մշակում են գործողություններ՝ նվազեցնելու բացակայություններն ու դպրոցից վաղ դուրս մնալը (Նիդեռլանդներ):

Ոչ պետական կազմակերպություններ

Խնդրի շուրջ իրականացվում է համագործակցություն ոչ պետական կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ սոցիալական ձեռնարկությունները, ՀԿ-ները, կամավորները:

Դպրոցների կառավարում

Պարտադիր կրթությունից դուրս մնալու կանխարգելումն օրենքով սահմանված է որպես դպրոցների զարգացման պլանների պարտադիր բաղադրիչ (Սերբիա, Կոսովո):

Երիտասարդ առաջնորդներ

Կառավարությունն իրականացնում է վերապատրաստումներ աշակերտական խորհրդի ընտրված անդամների համար՝ միտված նպաստելու նրանց դպրոցական ընկերների հաճախումների բարելավմանը: Նրանք կարող են հանդես գալ, որպես արդյունավետ միջնորդներ՝ դասարանում, ինչպես նաև դասընկերների ու դպրոցական անձնակազմի միջև ծագող խնդիրների հաղթահարման հարցում (Բելգիա):

Կրթությունից դուրս մնալու կանխարգելման և արձագանքման խմբեր դպրոցներում

Կոսովոյում սահմանված է յուրաքանչյուր դպրոցում նման խմբերի առկայության պահանջ: Խումբը կազմված է ուսուցիչներից, հոգեբաններից, դպրոցի խորհրդի, ծնողական խորհրդի ու աշակերտական խորհրդի անդամներից: Խմբերը պատասխանատու են ռիսկի գոտում գտնվող երեխաների անհատական դեպքերի կառավարման համար: Նրանք ընտրում են նաև դպրոցի մակարդակում կրթությունից դուրս մնալու կանխարգելման ու արձագանքման գործողությունները, որոնք հնարավորության սահմաններում ներառվում են դպրոցի զարգացման պլանում: ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ մշակվել է ձեռնարկ, որը պարունակում է ռիսկի գոտում գտնվող սովորողներին բացահայտելու գործիքներ և ուղենիշներ, թե ինչպես իրականացնել կրթությունից դուրս մնալու կանխարգելման և արձագանքման գործողություններ:

Կրթական հաջորդ մակարդակին անցում

- 10-րդ դասարանի աշակերտների համար պոտենցիալ նոր ավագ դպրոց այցի կազմակերպում և մեկ ամբողջ օր դասի անցկացում ավագ դպրոցում, ապագա ուսուցիչների հետ հանդիպում:
- Հանրակրթության երրորդ մակարդակ նոր անցած սովորողները վերադառնում են նախորդ դպրոց և ներկայացնում կրթական նոր մակարդակի վերաբերյալ իրենց փորձառությունը:
- Թիմբիլդինգի, էքսկուրսիաների, խմբային, համադպրոցական այլ միջոցառումների կազմակերպում

կրթական նոր մակարդակի անցման սկզբնական շրջանում՝ ապահովելու համար սահուն ինտեգրում:

- Հանրակրթության երրորդ մակարդակին անցմանը նախորդող ամառային ծրագրեր պարտադիր կրթությունից դուրս գտնվելու ռիսկի գոտում գտնվող սովորողների համար (անցման քննարկում, պոտենցիալ վախերի բացահայտում, դպրոցի ընտրության գործընթացի ներկայացում, դպրոցներ այցերի կազմակերպում, մշակութային միջոցառումներին ներգրավում և այլն):

Փորձի փոխանակում

Յուրաքանչյուր համայնքապետարանում 2 անձից բաղկացած ցանցի ձևավորում՝ հորիզոնական մակարդակում փոխադարձ վերապատրաստման, դրական փորձի փոխանակման նպատակով (Կոսովո):

Տրանսպորտ

Հեռավոր տարածքներում տանից դպրոց տեղափոխման հարցում աջակցություն (օր.՝ Բուլղարիա, Կոսովո):

Աղբյուր՝ *Improving Education Participation. Policy and Practice Pointers for Enrolling All Children and Adolescents in School and Preventing Dropout. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 2, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2017, էջ 18-20, 38-39, 42, 46-48, 71, 96: Monitoring Education Participation: Framework for Monitoring Children and Adolescents who are Out of School or at Risk of Dropping out. UNICEF Series on Education Participation and Dropout Prevention, Volume 1, Geneva: UNICEF Regional Office for Central and Eastern Europe and the Commonwealth of Independent States, 2016, էջ 67, 83, Reducing early school leaving: Key messages and policy support, Final Report of the Thematic Working Group on Early School Leaving, European Commission, 2013, էջ 33-34, 37, Preventing early leaving from education and training (ELET), National Policies Platform, European Commission, www.national-policies.eacea.ec.europa.eu:*

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Կառավարությանը

80. Սահմանել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ընդգրկման և պարտադիր կրթությունից դուրս մնալու կանխարգելման ուղղությամբ հանրային կառավարման մարմինների աշխատանքների կոորդինացման իրավական մեխանիզմ, այդ թվում՝ Առաջարկություն N2-ում նշված ծրագրի մշակման և իրականացման աշխատանքների համակարգման լիազորությամբ ***(Առաջարկություն N 1):***

81. Շահագրգիռ ու պատասխանատու հիմնական մարմինների ներգրավմամբ (այդ թվում՝ ԿԳՄՍՆ-ի, ՏԿԵՆ-ի, ԱՍՀՆ-ի, ՆԳՆ-ի, ԱԱԾ-ի, ԱԳՆ-ի) մշակել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ընդգրկման և պարտադիր կրթությունից դուրս մնալու կանխարգելման համալիր ծրագիր՝ հետևյալ հիմնական բնութագրիչներով ***(Առաջարկություն N 2).***

Ա. Կարողությունների զարգացում.

- Բացահայտման կարողությունների զարգացում, այդ թվում՝
    - Մշակել Կարգում փոփոխություններ՝ նախատեսելով սահմանահատումների վերաբերյալ տվյալների հիման վրա ՊԿԴՄԵ-ների թվի ճշգրտման ընթացակարգեր, այդ թվում՝ դիտարկելով իրական ժամանակում տվյալների ստացման հնարավորությունը՝ ԿԿՏՀ և ՍԷԿՏ տվյալների շտեմարանների փոխգործելիության ապահովման ճանապարհով ***(Առաջարկություն N 2.1)***.
    - Միջպետական համագործակցության շրջանակում ստանալ տվյալներ ՀՀ-ից դուրս գտնվող, ՀՀ քաղաքացի հանդիսացող 6-ից մինչև 19 տարեկան անձանց՝ այլ երկրի կրթական համակարգում ընդգրկված լինելու / չլինելու վերաբերյալ՝ ստացված տվյալներն արտացոլելով ԿԿՏՀ-ի Ենթահամակարգում (ըստ անհրաժեշտության, մշակելով անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ) ***(Առաջարկություն N 2.2)***.
    - Մշակել ընթացակարգեր միաժամանակ և ՀԾՀ, և դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանք չունեցող 0-ից մինչև 19 տարեկան անձանց բացահայտելու և ԿԿՏՀ-ի Ենթահամակարգում ներառելու նպատակով, այդ թվում՝ ***(Առաջարկություն N 2.3)***.
        - պետական տվյալների այլ շտեմարաններում կամ հանրային իշխանության այլ մարմիններին (օրինակ՝ ԱՆ-ին՝ որևէ առողջապահական հաստատություն այդպիսի անձանց դիմելու դեպքում, ՆԳՆ-ին, ՄՍԾ-ին, ԽՀՄ-ներին) ու մասնագիտացված ՀԿ-ներին նման դեպքեր ի հայտ գալու դեպքում, վերջիններս ԿԳՄՍՆ-ին հաղորդակցելու վերաբերյալ ***(Առաջարկություն N 2.3.1)***.
        - սահմանելով պարզեցված ընթացակարգեր առանց փաստաթղթերի նշված անձանց ուսումնական հաստատություն ընդունելու և ընդունումից հետո փաստաթղթավորման հարցում օժանդակելու վերաբերյալ ***(Առաջարկություն N 2.3.2)***:
- Մոնիթորինգի կարողությունների զարգացում, այդ թվում՝
    - Վերանայել «պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող սովորողի» սահմանումն այնպես, որ բացառվի առանց ռիսկի գոտում հայտնված ճանաչվելու, կրթությունից դուրս մնացած ճանաչվելու հնարավորությունը ***(Առաջարկություն N 2.4)***.
    - Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկը գնահատել և մշտադիտարկել համապարփակ ցուցչակազմի միջոցով, համաթվի կառուցմամբ ***(Առաջարկություն N 2.5).***

- Լավարկել կարգավորումները՝ հաճախումների հաշվառման ամբողջականությունը խթանելու նպատակով, ինչպես նաև սահմանել բացակայությունների պատճառների հաշվառման պահանջ ***(Առաջարկություն N 2.6):***

- Ուղղորդման կարողությունների զարգացում, այդ թվում՝
  - Մշակել առաջին դասարան ժամանակին ընդգրկվելուն ուղղված հատուկ ընթացակարգեր ***(Առաջարկություն N 2.7)***.
  - Մշակել միջին դպրոցից ավագ դպրոց արդյունավետ անցումն ապահովող կանխարգելիչ միջոցառումներ ***(Առաջարկություն N 2.8)***.
  - Մշակել ԿԿՏՀ-ի Ենթահամակարգի միջոցով (Կարգում համապատասխան ընթացակարգերի մշակմամբ) ՀՀ-ից դուրս գտնվող և այլ երկրի կրթական համակարգում չընդգրկված ՀՀ քաղաքացի հանդիսացող 6-ից մինչև 19 տարեկան անձանց, ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների օժանդակությամբ, կրթության մեջ ընդգրկելուն օժանդակելու մեխանիզմներ ***(Առաջարկություն N 2.9)***.
  - Պարտադիր կրթությունից դուրս մնացած և պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող երեխաների դեպքերի վարումը և այդ գործընթացում ներգրավված մարմինների գործողությունները հստակեցնելու և համակարգված իրականացնելու նպատակով, մշակել համապատասխան դեպքերի վարման շրջանակում մարմինների քայլերի հաջորդականությունը հստակ սահմանող փոփոխություններ ***(Առաջարկություն N 2.10).***
  - Խնդրո առարկային վերաբերելի հարցերի շրջանակում իրականացնել վերապատրաստումներ և/կամ իրազեկման աշխատանքներ շահագրգիռ և պատասխանատու մարմինների աշխատողների, ինչպես նաև մանկավարժական անձնակազմի համար ***(Առաջարկություն N 2.11)***:

Բ. Մշակել ԿԿՏՀ-ի տվյալների վրա հիմնված, պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառները հասցեագրող քաղաքականության միջոցառումներ ***(Առաջարկություն N 2.12):***

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը

82. Հաշվետվողականության ու թափանցիկության խթանման նպատակով, հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական հաշվետվությունների ձևերում նախատեսել ՊԿԴՄԵ-ների, ռիսկի գոտում գտնվող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների ներկայացման (ինչպես ագրեգացված, այնպես էլ՝ ապաագրեգացված) պահանջ և լրացման ցուցումներ ***(Առաջարկություն N 3):***

Եզրակացություն

83. Հաշվեքննիչ պալատը, կրթության բնագավառում պետական քաղաքականության բաղադրիչներից մեկի՝ պարտադիր կրթության համակարգում շահառուների ընդգրկվածության նպատակով իրականցվող միջոցառումների արդյունավետությունը գնահատելու համար որպես չափանիշներ կիրառել է օրենսդրությամբ և քաղաքականության միջոցառումների ծրագրերով հայտարարված նպատակներն ու հանձնառությունները: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ հաշվեքննության առարկայի շրջանակում չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը, քանի որ պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց բացահայտման, մոնիթորինգի և կրթական հաստատություններում ընդգրկման համակարգը չի ապահովել 2024թ. համար պարտադիր կրթության համակարգում ընդգրկվածության 99% ցուցանիշը: Այն կազմել է 82.5%՝ զիջելով ելակետային մակարդակը և չի մոտեցրել 2030թ. վերջնական թիրախի ապահովմանը:

Առաջարկություններ և արձագանք

ԱՐԴՅՈՒՆՔ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ
Շահագրգիռ և պատասխանատու կառույցների աշխատանքները կոորդինացնող իրավական մեխանիզմ սահմանված չէ	***ՀՀ Կառավարությանը*** Սահմանել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ընդգրկման և պարտադիր կրթությունից դուրս մնալու կանխարգելման ուղղությամբ հանրային կառավարման մարմինների աշխատանքների կոորդինացման իրավական մեխանիզմ, այդ թվում՝ Առաջարկություն N2-ում նշված ծրագրի մշակման և իրականացման աշխատանքների համակարգման լիազորությամբ ***(Առաջարկություն N 1)***:
	ՀՀ Կառավարությանը Շահագրգիռ ու պատասխանատու հիմնական մարմինների ներգրավմամբ (այդ թվում՝ ԿԳՄՄՆ-ի, ՏԿԵՆ-ի, ԱՍՀՆ-ի, ՆԳՆ-ի, ԱԱԾ-ի, ԱԳՆ-ի) մշակել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ընդգրկման և պարտադիր կրթությունից դուրս մնալու կանխարգելման համալիր ծրագիր՝ հետևյալ հիմնական բնութագրիչներով… ***(Առաջարկություն N 2)***: ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** ԿԳՄՄՆ-ի կողմից մշակվել և ՀՀ կառավարությանն է ներկայացվել Կարգը, որով սահմանվել են երեխայի կրթության իրավունքի իրացման համար պատասխանատու մարմինները: Վերջիններս իրենց լիազորությունների շրջանակում, օրենքով սահմանված կարգով ձեռնարկում են միջոցներ՝ երեխայի կրթության իրավունքի ապահովման համար: Այնուհետև՝ ԿԳՄՄՆ-ի կողմից ստեղծվել է Ենթահամակարգը պարտադիր կրթությունից դուրս գտնվող երեխաների հայտնաբերման, նրանց կրթության իրավունքի վերականգնման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու և այդ իրավունքի իրացման համար պատասխանատու մարմինների միջև օպերատիվ համագործակցություն ապահովելու նպատակով: Ուստի, ԿԳՄՄՆ-ն՝ որպես պետական կառավարման լիազոր մարմին, մշակում և իրականացնում է ծրագրեր (այդ թվում՝ կարողությունների զարգացման) բացառապես իր լիազորության շրջանակներում:

Հաշվեքննողների մեկնաբանություն

Հաշվեքննության արձանագրությամբ Հաշվեքննիչ պալատը որպես տվյալ առաջարկության հասցեատեր էր դիտարկել ԿԳՄՍՆ-ին՝ առաջարկելով «*ցուցաբերել ինստիտուցիոնալ առաջնորդություն՝* շահագրգիռ ու պատասխանատու այլ մարմինների հետ *համագործակցաբար*, մշակելու պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ընդգրկման և պարտադիր կրթությունից դուրս մնալու կանխարգելման համալիր ծրագիր…»:

Նշված առաջարկության հասցեատերը որոշելիս ՀՊ-ն նկատի էր ունեցել, որ.

- ԿԳՄՍՆ-ն է *մշակում և իրականացնում* կրթության, կրթության համակարգի բնականոն գործունեության ապահովման, կրթության բնագավառի պահպանման ու զարգացման ապահովման, կրթության համակարգի որակի և արդյունավետության մոնիտորինգի և գնահատման ոլորտներում Կառավարության *քաղաքականությունը*[32].
- ԿԳՄՍՆ-ն է ճանաչված ծրագրային բյուջետավորման համատեքստում, որպես հանրակրթության ծրագրի (1146) իրականացման համար *պատասխանատու*[33] մարմին:

ԿԳՄՍՆ-ն առաջարկությունը չի ընդունել՝ մատնանշելով իր լիազորություններից դուրս գտնվելու հանգամանքը: Նկատի ունենալով Նախարարության դիրքորոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ խնդրո առարկային առնչվող մարմինների բազմազանության պայմաններում, առաջնորդող հստակ ինստիտուտի բացակայությունը կարող է էական զսպող ազդեցություն ունենալ պարտադիր կրթությունում ընդգրկվածության վերաբերյալ պետության սահմանած նպատակների ու թիրախների ապահովման տեսանկյունից, հաշվեքննության սույն ընթացիկ եզրակացությունում առաջարկությունն ուղղվել է Կառավարությանը՝ Առաջարկություն N1-ի շրջանակում առաջարկված միջգերատեսչական մեխանիզմի համատեքստում ծրագրի մշակման համակարգման տրամաբանությամբ:

Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաներն ամբողջությամբ և ժամանակին չեն բացահայտվել	
Գործող կարգով սահմանված չեն ընթացակարգեր, որոնք հնարավորություն	Մշակել Կարգում փոփոխություններ՝ նախատեսելով սահմանահատումների վերաբերյալ տվյալների հիման վրա ՊԿԴՄԵ-ների թվի ճշգրտման ընթացակարգեր, այդ թվում՝ դիտարկելով իրական ժամանակում տվյալների ստացման հնարավորությունը՝ ԿԿՏՀ և ՍԷԿՏ տվյալների շտեմարանների փոխգործելիության ապահովման

[32] «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 9-րդ կետ:

[33] Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմինը դա այն պետական մարմինն է, որը պատասխանատու է ծրագրի շրջանակներում ֆինանսական միջոցների ծախսման և սահմանված արդյունքների ձեռք բերման համար: Որպես կանոն, այն հանդիսանում է տվյալ ծրագրի բնագավառում/ոլորտում պետական քաղաքականության համար պատասխանատու պետական մարմինը: Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմինը միաժամանակ հանդիսանում է ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր միջոցառումների գծով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչը՝ անկախ այդ միջոցառումների բնույթից և իրականացման եղանակից (ՀՀ ֆինանսների նախարարի 23.06.17թ. «ՀՀ-ում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության շրջանակներում մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին» N311-Ա հրամանի հավելված 1-ի 57-58-րդ կետեր): Ընդ որում, պատասխանատու մարմինը պարտադիր չէ, որ հանդիսանա տվյալ ծրագրի շրջանակում սահմանված միջոցառումներն իրականացնող մարմինը (*կատարողներ*), որպիսիք կարող են հանդես գալ նաև այն մարմինները, որոնք անմիջականորեն իրականացնում են միջոցառումը (օրինակ՝ ծառայության մատուցումը), կամ հանրային հատվածի այն կազմակերպությունները (օրինակ՝ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը), որը պետական մարմնի անունից իրականացնում է համապատասխան միջոցառումը (օրինակ՝ 1146 - Հանրակրթության ծրագրի միջոցառումների դեպքում՝ ԿԳՄՍՆ-ից զատ նաև ՀՀ մարզպետների աշխատակազմերի, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատությունները):

կընձեռեին սահմանահատումների հիման վրա ճշտելու ՀՀ-ից դուրս գտնվող 6-ից մինչև 19 տարեկան անձանց թիվը	ճանապարհով ***(Առաջարկություն N 2.1)***: ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** Ընդունելի է: ՍԷԿՏ-ի հետ փոխգործելիությունն իրական ժամանակում տվյալների ճշգրտման համար առանցքային դեր է կատարում, ինչը ոչ միայն կտա պարտադիր կրթությունից դուրս գտնվող երեխաներին արագ հայտնաբերելու հնարավորություն, այլև կխնայի մեծ ծավալի ռեսուրս: ԿԳՄՍՆ-ն ի սկզբանե միջոցներ է ձեռնարկել այդ փոխգործելիությանը հասնելու համար:
Չեն իրականացվել ընթացակարգեր և առկա չեն տվյալներ առ այն, թե ՀՀ-ից դուրս գտնվող 6-ից մինչև 19 տարեկան անձանցից քանիսն են ընդգրկվել այլ երկրի կրթական համակարգում և քանիսն են գտնվել կրթական համակարգից դուրս	Միջպետական համագործակցության շրջանակում ստանալ տվյալներ ՀՀ-ից դուրս գտնվող, ՀՀ քաղաքացի հանդիսացող 6-ից մինչև 19 տարեկան անձանց՝ այլ երկրի կրթական համակարգում ընդգրկված լինելու / չլինելու վերաբերյալ՝ ստացված տվյալներն արտացոլելով ԿԿՏՀ-ի Ենթահամակարգում (ըստ անհրաժեշտության, մշակելով անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ) ***(Առաջարկություն N 2.2):*** ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** **ա)** ՀՀ-ն չունի այնպիսի միջպետական համագործակցության շրջանակ, որը կսահմանի տարեկան որոշակի պարբերականությամբ որոշակի թվով երեխաների (ՀՀ քաղաքացիների)՝ արտերկրում կրթության մեջ ներգրավվածության կամ ընդգրկված չլինելու փաստի հաստատում: **բ)** Եթե այս հարցը դիտարկենք թվայնացման տիրույթում, ապա դա կենթադրի տարբեր պետությունների համապատասխան մարմինների հասանելիություն Ենթահամակարգին, որն ամբողջությամբ հանդիսանում է անձնական տվյալների շտեմարան: **գ)** Տարբեր պետությունների հետ նման համագործակցության շրջանակ ստեղծելը բավականին երկարաժամկետ գործընթաց է, որը ներառում է նաև աշխատանք դիվանագիտական խողովակներով, կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության համաձայնություն և համապատասխան պատրաստվածություն, իրավական կարգավորումների առկայություն, ինչպես նաև երկկողմ մեծ ռեսուրսների տրամադրում: Ներկայացված առաջարկը կդիտարկվի հետագայում: ***Հաշվեքննողների մեկնաբանություն*** **ա)** Առաջարկի տրամաբանությունը կայանում է նրանում, որ ներկայումս նման միջպետական համագործակցության շրջանակների բացակայության պայմաններում, ձեռնարկվեն համապատասխան միջոցներ նման համագործակցության շրջանակների ձևավորման ուղղությամբ: Հանրակրթությունում ընդգրկվածության ցուցանիշի գծով համադրելի երկրների հետ համեմատ ՀՀ-ի հարաբերականորեն ցածր դիրքերը ձևավորում են նշված համագործակցության մեխանիզմների ձևավորման հարցում ՀՀ-ի պրոակտիվ մոտեցման օբյեկտիվ անհրաժեշտություն: Հարկ է նկատել նաև, որ տարբեր երկրների հետ կնքված միջպետական համագործակցության համաձայնագրերը տալիս են կրթության բնագավառում լայն բնույթի համագործակցության հնարավորություն: **բ)** Առաջարկը չի ենթադրում այլ երկրի որևէ մարմնի հասանելիություն Ենթահամակարգին: Առաջարկը կարող է իրականացվել անհրաժեշտ տվյալների փոխանակման ճանապարհով, այդ թվում՝ փոխադարձության սկզբունքով դիտարկելով համանման մոտեցումները, որոնք կիրառում են այլ երկրները իրենց քաղաքացիների՝ ՀՀ կրթական համակարգում ընդգրկվածության վերաբերյալ տվյալներ հայցելիս:

գ) Առաջարկը չի ենթադրում կարճաժամկետ հորիզոնում դրա իրագործում: Առաջարկի իրականացման համար կարող է սահմանվել ժամանակացույց՝ համապատասխան միջոցառումներով և դրանց կատարողներով, որոնք թույլ կտան ժամանակի ընթացքում ձևավորել արտերկրում գտնվող և պարտադիր կրթության տարիքի ՀՀ քաղաքացիների վերաբերյալ տվյալների ստացման գործուն մեխանիզմներ և կարողություններ: Ժամանակային որոշակիություն չպարունակող «ներկայացված առաջարկը կդիտարկվի ապագայում» ձևակերպման առնչությամբ հարկ է նկատել, որ անկախ երկրում գտնվելու հանգամանքից, պետության պոզիտիվ պարտավորությունները պարտադիր կրթության տարիքի ՀՀ քաղաքացի հանդիսացող անձանց նկատմամբ չեն դադարում և չեն կարող տարաժամկետվել անորոշ հեռանկարով:

Հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում առաջարկությունն ուղղվել է Կառավարությանը՝ Առաջարկություն N1-ի շրջանակում առաջարկված միջգերատեսչական մեխանիզմի համատեքստում ծրագրի մշակման համատեքստում դիտարկման համար:

Սահմանված չեն միաժամանակ և ՀԾՀ, և դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանք չունեցող երեխաներին ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունելու և ընդունումից հետո փաստաթղթավորման հարցում ուղղորդելու իրավական ընթացակարգեր

Մշակել ընթացակարգեր միաժամանակ և ՀԾՀ, և դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանք չունեցող 0-ից մինչև 19 տարեկան անձանց բացահայտելու և ԿԿՏՀ-ի Ենթահամակարգում ներառելու նպատակով, այդ թվում՝ ***(Առաջարկություն N 2.3)***.

- պետական տվյալների այլ շտեմարաններում կամ հանրային իշխանության այլ մարմիններին (օրինակ՝ ԱՆ-ին՝ որևէ առողջապահական հաստատություն այդպիսի անձանց դիմելու դեպքում, ՆԳՆ-ին, ՄՄԾ-ին, ԽՀՄ-ներին) ու մասնագիտացված ՀԿ-ներին նման դեպքեր ի հայտ գալու դեպքում, վերջիններս ԿԳՄՍՆ-ին հաղորդակցելու վերաբերյալ ***(Առաջարկություն N 2.3.1)***:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք

Երեխային (0-ից 19 տարեկան) հաշվառող, կամ անձը հաստատող փաստաթուղթ տրամադրող, համապատասխան գործընթացների կազմակերպման մասին իրազեկող, ուղղորդող, աջակցող իրավասու մարմինը ԿԳՄՍՆ-ն չէ, ԿԳՄՍՆ-ն կարող է նշված մարմինների կողմից ստանալ միջնորդություն՝ համապատասխան երեխաներին, մինչև փաստաթղթերի ձեռքբերման գործընթացի ավարտը, կրթության մեջ ընդգրկելու վերաբերյալ, ինչը կփաստի այն մասին, որ համապատասխան մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում ձեռնարկել են միջոցներ և երեխայի հաշվառումն ընթացքի մեջ է: Հետևաբար, հաշվառում, ինչպես նաև անձը հաստատող որևէ փաստաթուղթ չունեցող երեխայի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման առաջնային օղակն այն մարմիններն են, ովքեր պատասխանատու են այդ գործընթացի ապահովման համար:

Հաշվեքննողների մեկնաբանություն

Առաջարկը չի ենթադրում, որ ԿԳՄՍՆ-ն իրականացնի երեխաների հաշվառում, տրամադրի անձը հաստատող փաստաթուղթ, ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ չունեցող երեխայի վերաբերյալ տեղեկատվություն և վերոնշյալ այլ գործողությունները: Առաջարկը ենթադրում էր, որ ԿԳՄՍՆ-ն, ցուցաբերելով ինստիտուցիոնալ առաջնորդություն, այլ գերատեսչությունների հետ համագործակցելով, *կմշակեր համապատասխան ընթացակարգեր* (օրինակ՝ որպես կրթության բնագավառում Կառավարության քաղաքականությունը մշակող մարմին, մշակեր Կարգում լրացումների վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծ՝ համանման տրամաբանությամբ, ինչպես ԿԳՄՍՆ-ն մշակել էր Կարգի նախագիծը, որում

ներկայացված են ոչ միայն ԿԳՄՄՆ-ի, այլև այլ գերատեսչությունների կողմից կատարման ենթակա գործողությունները):

Հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում առաջարկությունն ուղղվել է Կառավարությանը՝ Առաջարկություն N1-ի շրջանակում առաջարկված միջգերատեսչական մեխանիզմի համատեքստում ծրագրի մշակման համատեքստում դիտարկման համար:

- Սահմանելով պարզեցված ընթացակարգեր առանց փաստաթղթերի նշված անձանց ուսումնական հաստատություն ընդունելու և ընդունումից հետո փաստաթղթավորման հարցում օժանդակելու վերաբերյալ ***(Առաջարկություն N 2.3.2)***:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք

ԿԳՄՄՆ-ն երեխայի փաստաթղթավորման հարցում (ներառյալ՝ օժանդակելու) որևէ լիազորություն չունի: Միևնույն ժամանակ կդիտարկենք կրթության մեջ առանց փաստաթղթերի ընդգրկման արդյունավետ և պակաս ռիսկային ընթացակարգ սահմանելու հնարավորությունը՝ հաշվի առնելով միաժամանակ ռիսկերը կառավարելու անհրաժեշտությունը:

Հաշվեքննողների մեկնաբանություն

Առաջարկը չի ենթադրում, որ ԿԳՄՄՆ-ն պետք է զբաղվի երեխայի փաստաթղթավորման հարցերով: Առաջարկը ենթադրում էր ԿԳՄՄՆ-ի կողմից *համապատասխան պարզեցված ընթացակարգերի* սահմանում: Մասնավորապես, սույն ընթացիկ եզրակացության 32-րդ կետում ներկայացված են Կրթության և գիտության նախարարի 24.11.2010թ. թիվ 1640-Ն հրամանով հաստատված կարգով նախատեսված այն ընթացակարգային կարգավորումները, որոնք գործնականում կարող են զբաղող ազդեցություն ունենալ երեխայի կրթության սահմանադրական իրավունքի իրացման տեսանկյունից, ինչպես նաև չեն բխում խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային լավագույն փորձից (ներկայացված Ներդիր 1-ում):

Հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում առաջարկությունն ուղղվել է Կառավարությանը՝ Առաջարկություն N1-ի շրջանակում առաջարկված միջգերատեսչական մեխանիզմի համատեքստում ծրագրի մշակման համատեքստում դիտարկման համար:

Մոնիթորինգի համակարգն ունի չիրացված ներուժ արդյունավետ վաղ ահազանգում ապահովելու տեսանկյունից

Գործող սահմանումների պայմաններում, սովորողը կարող է համարվել պարտադիր կրթությունից դուրս մնացած՝ առանց պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում հայտնվելու	Վերանայել «պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող սովորողի» սահմանումն այնպես, որ բացառվի առանց ռիսկի գոտում հայտնված ճանաչվելու, կրթությունից դուրս մնացած ճանաչվելու հնարավորությունը ***(Առաջարկություն N 2.4)***: ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** Ընդունելի է:
Պարտադիր կրթությունից դուրս	Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկը գնահատել և մշտադիտարկել համապարփակ ցուցչակազմի միջոցով, համաթվի կառուցմամբ ***(Առաջարկություն N***

մնալու ռիսկի ցուցիչների կազմը համապարփակ չէ **Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի բաղադրյալ ցուցիչ (համաթիվ) չի ձևավորվում սովորողների համար**	***2.5):*** ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** **ա)** Համապատասխան համաթվի ստացման համար հիմք ծառայող ցուցիչների մասին տեղեկատվության ստացումը դուրս է ԿԳՄՄՆ լիազորությունների շրջանակից (օրինակ՝ աղքատության, ընտանեկան կարգավիճակի, առողջական և այլն): **բ)** Տարբեր մարմինների կողմից վարվող տվյալների շտեմարանների հետ ԿԿՏՀ տվյալների բազան համադրելի չէ, և հետևաբար տվյալների ինքնաշխատ փոխանակում չի արվում: **գ)** ԿԿՏՀ-ում դպրոցների կողմից աշակերտների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության հավաքագրումը չի կարող դիտարկվել պարտադիր պահանջ, հնարավոր է միայն երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության դեպքում, քանզի ԿԳՄՄՆ-ն լիազորված չէ սոցիալական, առողջական, և ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկատվություն հավաքագրելու, և համապատասխան ռեեստր վարելու: ***Հաշվեքննողների մեկնաբանություն*** Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի բաղադրյալ ցուցչի (համաթվի) բացակայությունը զսպող ազդեցություն է թողնում պարտադիր կրթությունից դուրս մնալու հարցում պետության արդյունավետ վաղ ահազանգումն ապահովելու տեսանկյունից՝ հաշվի առնելով սույն ընթացիկ եզրակացության 45-րդ կետում նշված հանգամանքները և խնդրո առարկային վերաբերելի միջազգային լավագույն փորձը (ներկայացված Ներդիր 2-ում և Ներդիր 3-ում): Համապատասխան համաթվի կառուցման երեք հիմնական բաղադրիչներն են՝ սովորողի առաջադիմությունը, վարքը և քրոնիկ բացակայությունները (ABC մեթոդ), որոնց վերաբերյալ տվյալները առկա են / կարող են հաշվառվել ԿԿՏՀ-ում: Այլ գերատեսչություններից տվյալների ստացման հարցում առկա սահմանափակումները հնարավոր է հաղթահարել համապատասխան օրենսդրական փոփոխությունների ճանապարհով՝ անձնական տվյալների պաշտպանության պահանջների պահպանմամբ: Տվյալների ինքնաշխատ փոխանակման հարցը պետք է դիտարկել դեպք առ դեպք մոտեցմամբ: Որևէ տվյալների շտեմարանի հետ տվյալների ինքնաշխատ փոխանակումը անհնար դիտարկվելու պարագայում անհրաժեշտ կլինի պարբերաբար ստանալ համապատասխան տվյալները և ներբեռնել ԿԿՏՀ-ում: Երեխայի կրթության իրավունքի արդյունավետ իրացվածությանը նպաստող, միջազգային լավագույն փորձով նախատեսված և այլ երկրներում հաջողությամբ կիրառվող համաթվերի կառուցման նպատակով, աշակերտների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության հավաքագրման և ԿԿՏՀ-ում մուտքագրման հարցում առկա սահմանափակումները հնարավոր է հաղթահարել՝ մշակելով անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ, այդ թվում՝ հանրակրթական դպրոցի սովորողի ծնողի և հաստատության միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևում:
Բացակայության պատճառները ԿԿՏՀ-ում չեն հաշվառվում	Լավարկել կարգավորումները՝ հաճախումների հաշվառման ամբողջականությունը խթանելու նպատակով, ինչպես նաև սահմանել բացակայությունների պատճառների հաշվառման պահանջ ***(Առաջարկություն N 2.6):*** ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** Ընդունելի է:

Ուղղորդման միջոցառումները թույլ չեն տվել հասնել սահմանված թիրախներին	
Չեն իրականացվել արդյունավետ վաղ ահազանգման միջոցառումներ՝ երեխաների ժամանակին ներգրավումը պարտադիր կրթության մեջ ապահովելու համար	Մշակել առաջին դասարան ժամանակին ընդգրկվելուն ուղղված հատուկ ընթացակարգեր ***(Առաջարկություն N 2.7)***: ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** Ընդունելի է:
Կրթական համակարգում ընդգրկված, այնուհետև պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների շուրջ 76%-ը կազմում են 9-րդ և 10-րդ դասարանցիները	Մշակել միջին դպրոցից ավագ դպրոց արդյունավետ անցումն ապահովող կանխարգելիչ միջոցառումներ ***(Առաջարկություն N 2.8)***: ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** Ընդունելի է:
Չեն իրականացվել ընթացակարգեր և առկա չեն տվյալներ առ այն, թե ՀՀ-ից դուրս գտնվող 6-ից մինչև 19 տարեկան անձանցից քանիսն են ընդգրկվել այլ երկրի կրթական համակարգում և քանիսն են գտնվել կրթական համակարգից դուրս	Մշակել ԿԿՏՀ-ի Ենթահամակարգի միջոցով (Կարգում համապատասխան ընթացակարգերի մշակմամբ) ՀՀ-ից դուրս գտնվող և այլ երկրի կրթական համակարգում չընդգրկված ՀՀ քաղաքացի հանդիսացող 6-ից մինչև 19 տարեկան անձանց, ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների օժանդակությամբ, կրթության մեջ ընդգրկելուն օժանդակելու մեխանիզմներ ***(Առաջարկություն N 2.9)***: ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** ՀՀ ԱԳՆ գործընկերների հետ, ՀՀ-ից դուրս բնակվող և պարտադիր կրթությունից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիներին հայտնաբերելու և ապա կրթության մեջ ներգրավելու աշխատանքների իրականացումն առաջիկայում իրատեսական չէ՝ պայմանավորված մի քանի պատճառով. **ա)** Հայտնաբերման և ուղղորդման համակարգը գործարկվել է 2024թ.-ի մայիսից, աշխատանքային ընթացքը պարբերաբար ցույց է տալիս հնարավոր բացերը և լավարկման անհրաժեշտությունը: **բ)** ՀՀ առաջնային խնդիրը ՀՀ տարածքում երեխայի կրթության իրավունքի ապահովումն է: Թերևս 2021թ. ի վեր միջոցներ են ձեռնարկվում ներպետական հարթության մեջ կրթությունից դուրս մնալու դեպքերը բացահայտելու, ռիսկերը կառավարելու, հետագայում կանխարգելելու ուղղությամբ: **գ)** Այս ուղղությամբ իրականացված շուրջ մեկ տարվա աշխատանքները նոր խնդիրների առաջ են կանգնեցնում և անհրաժեշտություն կա բուն գործընթացը լավարկելու այն աստիճանի, որ ՀՀ-ում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների դեպքերի հայտնաբերումը, ուղղորդումը, ռիսկերի կառավարումն ու կանխարգելումն իրականացվի ժամանակին (ներառյալ՝ ՍԷԿՏ-ի հետ փոխգործելիության հաստատումը), օպերատիվ արձագանք ու լուծում ստանա: ԿԳՄՄՆ-ն վերոգրյալի համատեքստում որևէ միտում չունի ստորադասելու օտարերկրյա պետություններում բնակվող ՀՀ քաղաքացիների կրթության իրավունքը, և պատրաստակամ է այս հարցը դիտարկել հետագայում՝ խնդիրը պետության ներսում ամբողջությամբ կառավարելի դարձնելուց հետո:

	Հաշվեքննողների մեկնաբանություն Սույն առաջարկը չի ենթադրում դրա իրագործում կարճաժամկետ հորիզոնում: Հաշվի առնելով, որ անկախ երկրում գտնվելու հանգամանքից, պետության պոզիտիվ պարտավորությունները պարտադիր կրթության տարիքի ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների նկատմամբ չեն դադարում և չեն կարող տարաժամկետվել անորոշ հեռանկարով, ՀՀ-ում գտնվող ՊԿԴՄԵ-ների մասով իրականացվող աշխատանքներին զուգընթաց, հնարավոր է պլանավորել և իրականացնել միջոցառումներ՝ համապատասխան ժամանակացույցով և կատարողներով, որոնք թույլ կտան ժամանակի ընթացքում ձևավորել առաջարկի կիրարկման գործուն մեխանիզմներ:
Պատասխանատու մարմինների կողմից, էլեկտրոնային կառավարման ենթահամակարգի միջոցով, անհատական դեպքի համատեղ կառավարման գործընթացը եղել է անարդյունավետ՝ սահմանափակելով կրթությունից դուրս մնացած անձանց՝ կրթական համակարգ ներգրավելու և ռիսկերը ժամանակին կառավարելու հնարավորությունը	Պարտադիր կրթությունից դուրս մնացած և պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող երեխաների դեպքերի վարումը և այդ գործընթացում ներգրավված մարմինների գործողությունները հստակեցնելու և համակարգված իրականացնելու նպատակով, մշակել համապատասխան դեպքերի վարման շրջանակում մարմինների քայլերի հաջորդականությունը հստակ սահմանող փոփոխություններ ***(Առաջարկություն N 2.10):*** ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** Պարտադիր կրթությունից դուրս մնացած և պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների դեպքերի վարումն ու այդ գործընթացում Կարգով սահմանված մարմինների գործողությունները հստակեցնելու և համակարգված իրականացնելու նպատակով Կարգում կկատարվի փոփոխություն, որը հստակ կսահմանի համապատասխան դեպքերի վարման շրջանակում մարմինների քայլերի հաջորդականությունը:
Երևան քաղաքում և մարզերում ԽՀՀ-ների անդամների համար գրեթե չեն կազմակերպվում և իրականացվում վերապատրաստումներ, որոնք ուղղված կլինեն երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում տվյալ մարմինների կարողությունների զարգացմանը և նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը	Խնդրո առարկային վերաբերելի հարցերի շրջանակում իրականացնել վերապատրաստումներ և/կամ իրազեկման աշխատանքներ շահագրգիռ և պատասխանատու մարմինների աշխատողների, ինչպես նաև մանկավարժական անձնակազմի համար ***(Առաջարկություն N 2.11)***: ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** ԿԳՄՄՆ-ն կդիտարկի «Պարտադիր կրթությունից դուրս մնացած և պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգում իրականացվող աշխատանքների շուրջ վերապատրաստումներ իրականացնելու հարցը (նման 1-օրյա վերապատրաստում արդեն իսկ կազմակերպվել է ԽՀՄ և ՄՄԾ ներկայացուցիչների համար՝ 2024թ. մայիսի 1-ին՝ համակարգի գործարկման մեկնարկից անմիջապես մեկ օր առաջ): ԿԳՄՄՆ կողմից կդիտարկվի որոշակի ձևաչափով խնդրո առարկայի վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը (մանկավարժական անձնակազմի մասով):

	Մշակել ԿԿՏՀ-ի տվյալների վրա հիմնված, պարտադիր կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառները հասցեագրող քաղաքականության միջոցառումներ ***(Առաջարկություն N 2.12):*** ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** Ընդունելի է:
Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական հաշվետվությունների ձևերը չեն ենթադրում ՊԿԴՄԵ-ների ընդհանուր թվի, ռիսկի գոտում գտնվող անձանց, ինչպես նաև նրանց բնութագրող ապաագրեգացված այլ տեղեկատվության (օրինակ՝ ըստ սեռատարիքային կազմի, պատճառների, մարզի, համայնքի վերաբերյալ) ներկայացում	Հաշվետվողականության ու թափանցիկության խթանման նպատակով, հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական հաշվետվությունների ձևերում նախատեսել ՊԿԴՄԵ-ների, ռիսկի գոտում գտնվող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների ներկայացման (ինչպես ագրեգացված, այնպես էլ՝ ապաագրեգացված) պահանջ և լրացման ցուցումներ ***(Առաջարկություն N 3):*** ***Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արձագանք*** ԿԳՄՄՆ-ն ՊԿԴՄԵ-ների թվի վերաբերյալ վիճակագրական հրապարակային հաշվետվություն կկարողանա ներկայացնել այն ժամանակ, երբ Համակարգն ամբողջությամբ ֆիլտրվի (ցանկերը ճշգրտվեն ՍԷԿՏ-ի միջոցով), ներդրվի կարգավիճակի փոփոխման (կրթության մեջ ընդգրկվելու դեպքում) ավտոմատացված մեխանիզմ և հետևաբար ստացված թիվը կհամարվի կրթությունից դուրս գտնվողների իրական թիվ: Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ հայտնվածների թվի մասին տեղեկատվությունն ավտոմատ է գեներացվում համակարգում, սակայն այստեղ խնդիր կա համապատասխան թվի ներկայացման մեթոդաբանության՝ արդյոք պետք է հաշվառվեն բոլոր ինքնաշխատ ձևավորված ռիսկի հայտերը, թե միայն այն հայտերը, որոնք ինքնաշխատ ձևավորվել են և տնօրենի կողմից հաստատվել որպես փաստացի ռիսկային: ***Հաշվեքննողների մեկնաբանություն*** Նախարարության մեկնաբանությունն ընդունելի, առաջարկը կարող է իրագործվել կարողությունների զարգացմանը համընթաց: Բարձրացված մեթոդաբանական հարցերը կարող են հստակեցվել նաև առաջարկության մեջ մատնանշված լրացման ցուցումներում:

Հաշվեքննության մասին

84. Կատարողականի հաշվեքննության թեմաները ձևակերպվում են ռազմավարական գործընթացի արդյունքում՝ հիմնվելով արտաքին պետական հաշվեքննության միջնաժամկետ առաջնահերթությունների վրա: Թեմաների ընտրությունը կատարվում է՝ ելնելով դրանց էականությունից, բարելավման ներուժից և հաշվեքննելիությունից:

85. Կատարողականի հաշվեքննությունը պլանավորվում, իրականացվում և արդյունքներն ամփոփող հաշվետվությունը կազմվում է՝ առաջնորդվելով աուդիտորական էթիկայի սկզբունքներով և մասնագիտական ստանդարտներով[34]՝

- սահմանելով կատարողականի գնահատման հուսալի չափանիշներ՝ հիմնված օրենսդրության և միջազգային լավագույն փորձի վրա: Չափանիշները ցույց են տալիս, թե հաշվեքննության առարկան ինչպիսի պայմանների պետք է բավարարի, որպեսզի ապահովվի բարձր կատարողական: Չափանիշները հաշվեքննության իրականացման փուլի մեկնարկին քննարկվում են հաշվեքննության ենթակա մարմնի հետ.

- հավաքելով հաշվեքննության բավարար (քանակապես) և համապատասխան (որակապես) ապացույցներ.

- ներկայացնելով հաշվեքննության արդյունքները՝ առկա իրավիճակը հաշվեքննության չափանիշների հետ համեմատելու հիման վրա.

- վեր հանելով հաշվեքննության արդյունքը պայմանավորող պատճառներն ու հետևանքները: Բացահայտված պատճառները կարևոր են բարելավման առաջարկությունների ուղենշման համար, իսկ հետևանքները՝ նպատակ են հետապնդում հաշվետվությունն օգտագործողներին ներկայացնել հաշվեքննության առաջարկությունների կատարման անհրաժեշտության հիմնավորումները.

- եզրակացնելով՝ ի պատասխան հաշվեքննության նպատակի.

- առաջարկելով ինչ անել՝ հաշվեքննության առարկայի առկա հիմնախնդիրները լուծելու և կատարողականը բարելավելու համար:

[34] Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի «Կատարողականի հաշվեքննության մեթոդաբանության» համաձայն՝ հիմնված «ISSAI 100 - Հանրային հատվածում աուդիտի հիմնարար սկզբունքները»

86. Հաշվետվության հաստատումից հետո իրականացվում է հետհսկողություն՝ պարբերաբար հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը ներկայացնելով տեղեկատվություն հաշվեքննության առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

87. Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի 2024թ. մարտի 14-ի թիվ 33-Ա որոշմամբ հաստատված առաջադրանքի հիման վրա: Հաշվեքննիչ պալատի 2024թ. գործունեության ծրագրի 2-րդ մասի 6-րդ ծրագրային կետը կատարվել է հաշվեքննության 2024-2026թթ. միջնաժամկետ առաջնահերթություններից 2.3-րդ ուղղությունն իրագործելու նպատակով:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄԸ

88. Առարկան. Հաշվեքննության ընթացքում գնահատվել է պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների ընդգրկվածության բարձրացումը:

89. Նպատակը. Տվյալ հաշվեքննության նպատակն է՝ գնահատել պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների ընդգրկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը և գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել ընդգրկվածության բարձրացմանը միտված առաջարկություններ:

90. Հարցերը. Հաշվեքննության են ենթարկվել ձևակերպված նպատակից բխող հետևյալ հարցերը.

- բավարար արդյունավետ է արդյոք պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների բացահայտման գործող համակարգը.
- ներդրվա՞ծ է արդյոք պարտադիր կրթությունից դուրս մնացած և դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող երեխաների մոնիթորինգի արդյունավետ համակարգ.
- բավարար արդյունավե՞տ է արդյոք պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների ուղղորդման գործող համակարգը:

91. Մոտեցումը. Կատարողականի հաշվեքննությունն իրականացվել է *համակարգին և արդյունքին միտված* մոտեցումներով:

և «ISSAI 300 - Կատարողականի աուդիտի սկզբունքները» աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային ստանդարտների վրա:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ՄԱՐՄԻՆԸ

92. Հաշվեքննության ենթակա մարմինը (օբյեկտը) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

93. Որպես հաշվեքննության չափանիշների աղբյուրներ են դիտարկվել հաշվեքննության առարկային վերաբերելի ՀՀ օրենսդրությունն ու միջազգային լավագույն փորձը, այդ թվում՝ հաշվեքննության առարկայի առնչությամբ գլոբալ առաջնորդություն ստանձնած մարմնի՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հետևյալ փաստաթղթերը.

- Դպրոցից դուրս մնացած երեխաների համաշխարհային նախաձեռնություն, գործառնական ձեռնարկ.
- Կրթությանը մասնակցության մոնիթորինգի ձևաչափ.
- Կրթությունից դուրս մնալու ռիսկի գոտում գտնվող սովորողների վաղ ահազանգման համակարգեր.
- Կրթությանը մասնակցության բարելավում:

94. Ընտրված չափանիշները ներկայացված են հաշվեքննության յուրաքանչյուր արդյունքին կից:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

95. Հաշվեքննությունն ընդգրկել է 2021թ. հունվարի 1-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 30-ը ներառող ժամանակաշրջանը: Հաշվեքննությունը կատարվել է 2024թ. ապրիլի 22-ից մինչև 2025թ. փետրվարի 27-ն ընկած ժամանակահատվածում:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԱՐՄՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

96. Հաշվեքննության արդյունքներն ամփոփող հաշվեքննության արձանագրությունը սահմանված կարգով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտին: Հաշվեքննության օբյեկտի ղեկավարը 2025թ. մարտի 3-ին ներկայացրել է իր մեկնաբանությունները արձանագրված փաստերի վերաբերյալ: Հաշվեքննության օբյեկտի մեկնաբանությունները, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի արձագանքը դրանց վերաբերյալ ներառվել են սույն փաստաթղթում (մասնավորապես՝ «Առաջարկություններ և արձագանք» բաժնում):

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲԸ

97. Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի կատարողականի հաշվեքննության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի նախագահ Ատոմ Ջանջուղազյանը:

Ատոմ Ջանջուղազյան
Հաշվեքննիչ պալատի նախագահ
27 փետրվարի, 2025 թվական
Հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան 19, ք. Երևան
Հայաստանի Հանրապետություն

Հավելված 1.

Պարտադիր կրթության բնագավառին առնչվող հիմնական մասնակիցները և նրանց պարտականությունները

Դերակատար	Հիմնական պարտականություններ
Ծնող	Սովորողների ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ ծնող) դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ ՀՄՕ-ով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով (ՀՄՕ, հոդվ. 16, մաս 1): Դպրոցական տարիքի երեխային ուսումնական հաստատություն ընդգրկելու համար պատասխանատու է ծնողը՝ օրենքով սահմանված կարգով (ՀՄՕ, հոդվ. 16, մաս 5): Ուսումնական պարապմունքներից սովորողի հաճախակի անհարգելի բացակայության համար պատասխանատվություն է կրում ծնողը՝ օրենքով սահմանված կարգով (ՀՄՕ, հոդվ. 21, մաս 6): Ծնողի, այլ օրինական ներկայացուցչի կամ այլ անձի կողմից, որի վրա երեխայի դաստիարակության, ուսուցման կամ խնամքի պարտականություն է դրված, այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ինչպես նաև անչափահասների կողմից թմրամիջոցներ օգտագործելն առանց բժշկի նշանակման կամ նրանց կողմից այլ իրավախախտումներ կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով (ՎԻՎՕ, հոդվ. 178, մաս 1): Սովորողի ծնողը պարտավոր է նաև (ՀՄՕ, հոդվ. 28, մաս 2, կետ 1, 2, 8, 9)՝ • երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար և աջակցել դասապատրաստմանը. • մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար. • սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց. • մասնակցել երեխայի անհատական ուսուցման պլանի իրականացմանը:
Ուսումնական հաստատություն	Ապահովում է դպրոցական տարիքի երեխայի ընդգրկումը ուսումնական հաստատություն (ՀՄՕ, հոդվ. 16, մաս 6):
Տնօրեն	Իրականացնում է օրենսդրությամբ սահմանված՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած և կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաների հայտնաբերման և դպրոց ուղղորդման կամ վերաուղղորդման աշխատանքները, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) հայտնաբերման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում է սովորողի հաշվառման հասցեի ԽՀՄ-ին (ՀՄՕ, հոդվ. 12, մաս 20, կետ 24): Հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված, սակայն մեկ ամսվա ընթացքում 6 աշխատանքային օր անընդմեջ չհաճախած սովորողների դեպքում ինքնաշխատ եղանակով ստեղծվում է նախնական հայտ: Հաստատության, ՆՄՄԿ-ի տնօրենը նախնական հայտի ձևավորման պահից սկսած՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ փակում է նախնական հայտը՝ նշելով հաստատման կամ փակման պատճառները՝ սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացրած գրավոր բացատրագրի հիման վրա: Նախնական հայտը հաստատելուց հետո այն հասանելի է դառնում երեխայի բնակության վայրի ԽՀՄ-ին (Կարգի հավելված, կետ 7):
Մանկավարժական աշխատող	Մանկավարժական աշխատողը պարտավոր է (ՀՄՕ, հոդվ. 27, մաս 2, կետ 2 և 6)՝ • նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները. • համագործակցել ծնողների հետ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

ՏՄԱԿ	Եթե անձն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, համապատասխան փաստաթուղթ ներկայացված չլինելու պարագայում ԽՀՄ-ն դիմում է ՏՄԱԿ-ին: Վերջինս, տեղեկացնելով ծնողին (օրինական ներկայացուցչին), ապահովում է անձի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը և ուղղորդում է անձին հաստատություն կամ ՆՄՄԿ՝ սահմանված կարգով կրթությունը կազմակերպելու համար:
ՏԻՄ / ԽՀՄ	Համայնքի ղեկավարը պարտադիր լիազորության կարգով՝ իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն (ԿՄՕ, հոդվ. 39, մաս 2, ՀՄՕ, հոդվ. 32, մաս 1, կետ 2): Որևէ հաստատությունում, ՆՄՄԿ-ում չհաշվառված երեխաների տվյալներն էլեկտրոնային եղանակով հասանելի են երեխայի բնակության վայրի ԽՀՄ-ին՝ երեխաների՝ պարտադիր կրթությանը ներգրավվածությունն ապահովելու նպատակով (Կարգի հավելված, կետ 5): ՊԿԴՄԵ-ների, ՆՄՄԿ-ում կրթությունն ընդհատած սովորողների, հաստատություն, ՆՄՄԿ հաճախած, սակայն ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի (արտերկիր մեկնելու նպատակով) հիման վրա ուսումն անավարտ թողած սովորողների դեպքում ինքնաշխատ եղանակով ստեղծվում է հայտ, որը հասանելի է տարածքային ԽՀՄ-ին: Տվյալ դեպքերում հայտերի ստեղծող է համարվում տարածքային ԽՀՄ-ն (Կարգի հավելված, կետ 8): Արտերկիր մեկնելու նպատակով հաստատությունից, ՆՄՄԿ-ից սովորողին ազատելու վերաբերյալ սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի առկայության դեպքում, երբ երեխայի բնակության վայրի ԽՀՄ-ն հսկողության արդյունքում բացահայտում է երեխայի՝ արտերկիր չմեկնելու վերաբերյալ փաստը, ձեռնարկում է Կարգով սահմանված գործողություններ՝ սովորողի պարտադիր կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով (Կարգի հավելված, կետ 8.1): Էլեկտրոնային ենթահամակարգում պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող սովորողների կամ ՊԿԴՄԵ-ների վերաբերյալ հայտը ստանալուց հետո տվյալ տարածքի ԽՀՄ-ն 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է հայտը և օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում քայլեր է ձեռնարկում սովորողի կրթության շարունակականությունն ապահովելու համար (Կարգի հավելված, կետ 9):
Տարածքային կառավարման մարմիններ	Մարզպետը (Երևան քաղաքում՝ քաղաքապետը) համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություն (ԿՄՕ, հոդվ. 38, մաս 3, ՀՄՕ, հոդվ. 31, մաս 1, կետ 3):
ԿԳՄՄՆ	Մշակում և իրականացնում է կրթության, կրթության համակարգի բնականոն գործունեության ապահովման, կրթության բնագավառի պահպանման ու զարգացման ապահովման, կրթության համակարգի որակի և արդյունավետության մոնիտորինգի և գնահատման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը («Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 9-րդ կետ): Ճանաչված ծրագրային բյուջետավորման համատեքստում, որպես հանրակրթության ծրագրի (1146) իրականացման համար *պատասխանատու* մարմին: Հաստատություն, ՆՄՄԿ չհաճախած կամ հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված չլինելու դեպքում պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց բացահայտելու համար ԿԳՄՄՆ ԿՏԱԿ-ը յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր և հունվար ամիսներին, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները, նախարարությանը ներկայացնում է 6-ից մինչև 19 տարին չլրացած այն անձանց տվյալները, որոնք որևէ հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված չեն (Կարգի հավելված, կետ 5):
ԱՍՀՆ	ԽՀՄ-ի կողմից հայտնաբերելու դեպքում, եթե պարզվում է, որ անձի բացակայությունների պատճառը սոցիալական կարիքներով է պայմանավորված, հայտ է ուղարկում ՄՄԾ՝ անձի սոցիալական կարիքները հոգալու համար (Կարգի հավելված, կետ 10): Երեխայի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները, ռազմավարական ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրավիճակի վերլուծությունը, առաջնահերթությունները, ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգը սահմանվում են երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագրով: Համալիր ծրագիրն ապահովում է երեխայի

	իրավունքների ապահովման, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության համակարգված, նպատակային, շարունակական և արդյունավետ իրականացումը («Երեխայի իրավունքների մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մաս):
ՆԳՆ	Եթե ԽՀՄ-ն իր համայնքում չի հայտնաբերում անձին կամ անձին կրթություն վերադարձնելու համար արձանագրում է խոչընդոտներ, հայտ է ուղարկում Ոստիկանությանը (Կարգի հավելված, կետ 10):
Շահագրգիռ և պատասխանատու մարմիններ	Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող՝ հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված, սակայն մեկ ամսվա ընթացքում 6 աշխատանքային օր անընդմեջ չհաճախած սովորողների և ՆՄՄԿ-ում կրթությունն ընդհատած սովորողների դեպքում ԽՀՄ-ի, ԱՍՀՆ-ի, ԿԳՄՍՆ-ի, կրթության տեսչական մարմնի, ՀՀ մարզպետների աշխատակազմերի, ՄՄԾ-ի, Ոստիկանության կողմից ապահովվում է սովորողի ներգրավվածությունն ուսումնական գործընթացին: Հաստատություն, ՆՄՄԿ հաճախած, սակայն ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի (արտերկիր մեկնելու նպատակով) հիման վրա ուսումն անավարտ թողած սովորողների դեպքում ԽՀՄ-ի, ԱՍՀՆ-ի, ԿԳՄՍՆ-ի, կրթության տեսչական մարմնի, ՀՀ մարզպետների աշխատակազմերի, ՄՄԾ-ի, Ոստիկանության կողմից միջոցներ են ձեռնարկվում պարզելու սովորողի՝ ՀՀ-ում լինելու կամ չլինելու հանգամանքը: ՀՀ-ում լինելու դեպքում ապահովվում է ներգրավվածությունն ուսումնական գործընթացին (Կարգի հավելված, կետ 4):

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒԺԵՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բաղրամյան 19
www.armsai.am, secretariat@armsai.am